5 ՅՈՒՆԻՍ 2003 ՀԻՆԳՇԱԲԹԻ 105 (2790)

Azg

Azg
armenian daily

Գրադարան
ՀՀ ԱԳՆ

ԱԺ նախագահի հարցն էլ վճռվեց «Պարտեզում»

Մեր երկրում վաղուց սովորույթ է դարձել պետական նշանակության կարեւոր հարցերը քննարկել ոչ թե գրասենյակներում, այլ տարբեր զվարճավայրերում եւ հատկապես «Պարտեզ» ռեստորանում, որը գտնվում է Երեբունի համայնքի տարածքում: Այստեղ գտնվող սիրամարգերը, աղվեսներն ու արջերը հավանաբար ներշնչանքի աղբյուր են մեր պետական գործիչներից շատերի համար, իսկ ոգելից մթնոլորտը նպաստում է նրանց ուղեղի ավելի արագ աշխատանքին:

«Ազգին» հասած տեղեկություններին համաձայն, երեքշաբթի գիշեր հենց «Պարտեզում» է ծոխ սեղանի շուրջ կայացել մի կարեւոր հանդիպում, որի ընթացքում վճռվել է նոր Ազգային ժողովի նոր խոսնակի ինքնության հարցը: Ամենայն հավանականությամբ այդ պաշտոնը կզբաղեցնի «Օրինաց երկիր» անունով հայտնի կազմակերպության ղեկավար Արթուր Բաղդասարյանը: Վերջինիս սեղանակիցները հիշյալ գիշեր, հիշյալ «Պարտեզում» եղել են ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը եւ մեկ այլ կազմակերպության՝ «Ազգային միաբանության» նախագահ Արտաշես Գեղամյանը: Մեր տեղեկություններով, գոնե այս դեպքում կայացել է ազգային եռյակ միաբանությունը՝ որոշվել է Ա. Գեղամյանին դարձնել Ա.Ժ. փոխխոսնակ: Նրանք երկուսով փրկել են այս երկիրը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության

2003 թ. մայիսի 25-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների մասին

ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը.

– կարեւորում է կուսակցության հետագա գործունեությունը երկրում արդար ընտրությունների ժամանակակից համակարգի ձեւավորման ուղղությամբ՝ վերջինս դիտարկելով որպես ժողովրդավարական հասարակարգի կարեւորագույն նախապայման,

– անհրաժեշտ է համարում կատարելագործել ՀՌԱԿ քարոզչական եւ կազմակերպչական գործունեությունը,

– վճռականություն է հայտնում սփյուռքի Ռամկավար Ազատական կուսակցության շրջանակների եւ Ռուսաստանի հայերի միության հետ շարունակելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը,

– շնորհակալություն է հայտնում երկրի տասնյակ հազարավոր քաղաքացիներին, որոնք ընտրությունների ընթացքում իրենց վստահությունը հայտնեցին Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությանը:

Կուսակցությունը շարունակելու է ավանդական քաղաքականությունը՝ հավատարիմ մնալ հայոց պետականության ամրապնդման ուղեգծին: Հայ ժողովուրդը հավերժ է, իշխանություններն՝ անցողիկ:

ՀՀ ԱԳ նախարար Օսկանյանը հանդիպել է Թուրքիայի ԱԳ նախարար Գյուլին

Հունիսի 3-ին Մադրիդում ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը հանդիպել է Թուրքիայի իր գործընկերոջ հետ: Թուրքիայի ԱԳ նախարար Աբդուլա Գյուլի հետ հանդիպմանը, որը երկու նախարարների առաջին հանդիպումն էր Թուրքիայում նոր կառավարության ձեւավորումից հետո եւ հիմնականում ծանոթացման նպատակ էր կրում, քննարկվել են տարածաշրջանային խնդիրներ, ԼՂ հակամարտության կարգավորմանն ու երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր: Երկուստեք կարեւորվել է հարաբերությունների բարելավումը երկու երկրների միջեւ, որը դրականորեն կանդրադառնա տարածաշրջանում կայունության ու անվտանգության հաստատման վրա:

Նախարարները պայմանավորվածություն են ձեռք բերել երկխոսությունը շարունակելու վերաբերյալ:

Նախարար Օսկանյանը Մադրիդում է գտնվում ՆԱՏՕ-ԵԱԳԽ հերթական նախարարական հանդիպմանը մասնակցելու նպատակով:

Նույն օրը նախարար Օսկանյանը հանդիպում է ունեցել Մինսկի խմբի համանախագահների հետ, որի ժամանակ քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում վերջին ու հնարավոր զարգացումները եւ համանախագահների՝ տարածաշրջան հնարավոր այցին առնչվող հարցեր:

ԱԳՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՊՀ տասը երկրներ անվտանգության համատեղ միջոցառումներ էին քննարկում Երեւանում

Երեկ Երեւանում երկօրյա աշխատանքներն ավարտեց ԱՊՀ անդամ երկրների անվտանգության մարմինների ու հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում էին Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Ուզբեկստանի ներկայացուցիչները: Երեւան չէր ժամանել խորհրդի անդամ Ադրբեջանի պատվիրակությունը: Ներկայացված չէր նաեւ Թուրքմենստանը, որն Ուզբեկստանի հետ ԱՊՀ այս կառույցում դիտորդի կարգավիճակ ունի:

Տասը երկրների բարձրաստիճան պատգամավորների հրավիրած համատեղ մամլո ասուլիսի ժամանակ ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության ղեկավար Նիկոլայ Պատրուշեւը երեկ տեղեկացրեց, որ նիստում որոշումներ են ընդունվել հակաահաբեկչական պայքարի, զենքի ու թմրանյութերի ապօրինի շրջանառության, տեղեկությունների փոխանակման եւ երկրների անվտանգության առնչվող այլ խնդիրների վերաբերյալ:

Քննարկվել են այս հուլիսին Ուկրաինայում անցկացվելիք Համագործակցության անդամ երկրների հակաահաբեկչական միավորումների տակտիկա-մասնագիտական զորավարժությունների կազմակերպման մանրամասները՝ ԱՊՀ հակաահաբեկչական կենտրոնի հովանու ներքո:

Ամփոփվել են 2000-2003 թթ. աշխատանքների արդյունքները, կոնկրետացվել 2003-2005 թթ. անելիքները: Անվտանգության մարմինների եւ հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի 14-րդ նիստում խորհրդի նախագահի պատշգամբում վերընտրվել է Նիկոլայ Պատրուշեւը, որը երեկ ընդգծեց, թե Երեւանում բարենպաստ պայմաններ էին ստեղծված եւ կազմակերպվածության բարձր մակարդակ իրենց աշխատանքի համար:

ԱՊՀ տասը պետությունների ներկայացուցիչները նիստի ավարտին ստորագրել են աշխատանքի արդյունքներն ամփոփող փաստաթուղթ:

Լ. Գ.

Հեյդար Ալիեւ. Թուրքական բանակը մեզ համար օրինակ է

ԲԱՔՈՒ, 4 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեքշաբթի նախագահ Հեյդար Ալիեւն ընդունել է Թուրքիայի ժանդարմական ուժերի հրամանատար, բանակի գեներալ Շեներ Էրույգուրին: Զրույցի ընթացքում Ալիեւը շեշտը դրել է Ադրբեջանի զինված ուժերի շինարարության մեջ թուրքական փորձն օգտագործելու վրա եւ երախտագիտություն հայտնել այդ գործում օգնության համար: «Թուրքական բանակը մեզ համար օրինակ է: Մենք բարձր ենք գնահատում Թուրքիայի զինված ուժերի օգնությունն Ադրբեջանին՝ ռազմական շինարարության գործում»,- ընդգծել է նախագահը: Իր հերթին Էրույգուրը հայտարարել է Նախիջեւանի ինքնավար հանրապետությանը եւս համապատասխան օգնություն ցուցաբերելու Թուրքիայի պատրաստակամության մասին: Հանդիպմանը քննարկվել են նաեւ հարցեր՝ կապված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի անվտանգության ապահովման հետ:

Նույն օրը կայացել է Էրույգուրի հանդիպումը ՆԳՆ ղեկավար Ռամիլ Ռուսուբովի հետ: Ինչպես հաղորդում է Բաքվի «525» թերթը, չորեքշաբթի հյուրը կայցելի Ադրբեջանի ՆԳՆ ներքին զորքերի գլխավոր վարչություն, ինչպես նաեւ Ղալա ավանի ուսումնական կենտրոն: Ներքին զորքերի զինծառայողների կադրերի որակավորման բարձրացման այդ կենտրոնը ստեղծվել է 1998 թվականին թուրքական կողմի աջակցությամբ:

«Վրաստանում առկա քրեածին իրավիճակի պայմաններում չենք կարող կազմակերպել ժողովրդավարական ընտրություններ»

Ընդդիմությունը Շեւարդնաձեին սպասեց ներողություն խնդրել Ալիեւից, Թուրքմենբաշուց

«Վրաստանում առկա քրեածին իրավիճակի պայմաններում մենք չենք կարող կազմակերպել ժողովրդավարական ընտրություններ», երեկ կառավարության նիստում ասել է նախագահ Էդ. Շեւարդնաձեն:

Երկրի ղեկավարն ասել է, որ ուժային կառույցները պետք է անողոք պայքար տանեն մարդասպանների, թալանչիների, քրեական հեղինակությունների, բոլոր նրանց դեմ, ովքեր ներգրավված են թմրանյութերի առեւտրի մեջ, ովքեր կործանեցին Վրաստանը:

Շեւարդնաձեն այս հայտարարություններն անուղղակիորեն կապել է նախօրեին ընդդիմադիր 5 կուսակցությունների կազմակերպած հանրահավաքի հետ, հավելելով, որ ուժային նախարարություններին եւ Անվտանգության խորհրդին հորդորել է մշակել երկրի տարածքում հակաքրեական գործողություններ անցկացնելու պլան:

«Միացյալ ժողովրդավարներ», «Ազգային շարժում», «Նոր աջեր», «Տրադիցիոնալիստներ», «Սախալխո» ընդդիմադիր կուսակցությունների երեքշաբթի օրը կազմակերպած հանրահավաքը մինչեւ ուշ գիշեր շարունակվեց Շեւարդնաձեի նստավայրի դիմաց: Մոտ 5 հազար ցուցարարներ պահանջեցին պետության ղեկավարի հրաժարականն այն ժամանակ, երբ Շեւարդնաձեն պետանվտանգության նախարար Վ. Խաբուրձանիայի հետ քննարկում էր երկրում առկա քրեածին իրավիճակը հաղթահարելու ուղիները:

«Վրաստանն առանց Շեւարդնաձեի»՝ վանկարկում էին Զուրաբ Ժվանիան, Միխայիլ Սահակաշվիլին, հիմնականում ուսանողներից կազմված ամբոխը:

Կառավարության նիստում երեկ Շեւարդնաձեն ներողություն խնդրեց Հեյդար Ալիեւից, Թուրքմենբաշուց, ադրբեջանցի եւ թուրքմեն ժողովրդից: Բանն այն է, որ ընդդիմության կազմակերպած հանրահավաքում անվայել արտահայտություններ էին արվել Ալիեւի եւ Թուրքմենբաշու հասցեին: «Վրաստանը չպետք է հետեւի Ադրբեջանում եւ Թուրքմենստանում ընտրություններ անցկացնելու օրինակին», ասվել էր հանրահավաքում:

Վրաստանում ժողովրդականություն վայելող գործիչներից Նինո Բուրջանաձեն, որին ընդդիմությունն առաջարկել է ղեկավարել նոյեմբերի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում ընդդիմադիր դաշինքը, երեկ «Ռուսթավի-2» հեռուստատեսությամբ հայտարարեց, որ Շեւարդնաձեին սատարող քաղաքական ուժերի վարկանիշը զրոյից ցածր է:

Մի քանի շաբաթ առաջ տկն Բուրջանաձեն Շեւարդնաձեին հորդորել էր խույս տալ երկրում դիկտատուրա հաստատելու մտադրությունից:

Թվում է, Վրաստանում ներքաղաքական ցնցումներն անխուսափելի են:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

ՀԱՄԱՌՈՏ

Ամբան կդառնա՞ պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման վայր

Երեկ երեկոյան ավարտված եռակողմ հանդիպումից հետո հրապարակված տեղեկությունները հուսադրող են. Բուշ-Շարոն-Աբբաս հանդիպումը հորդանանյան Ամբա նավահանգստային քաղաքում կարող է վերջ դնել 1948 թ.-ից ի վեր շարունակվող պաղեստինա-իսրայելական հակամարտությանը: Այդպիսի ենթադրության համար հիմք են հանդիսանում հանդիպման ավարտին Մ. Նահանգների նախագահ Ջորջ Բուշի, Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի եւ Պաղեստինյան ինքնավարության վարչապետ Մահմուդ Աբբասի հայտարարությունները մամուլին: Նախագահ Բուշը հավաստիացրեց, որ Վաշինգտոնը հանձնառու դիրքորոշումը շարունակելու է կողմերի միջեւ կայացած համաձայնության նկատմամբ, վարչապետ Շարոնը խոստացավ հարգել առանձին պետություն ունենալու պաղեստինցիների իրավունքը եւ լուծել իսրայելական նոր բնակեցումների հարցը, իսկ վարչապետ Աբբասը հավատարմություն հայտնեց հակաիսրայելական ահաբեկչություններին վերջ դնելու սկզբունքին, նման արարքներն անհարիր գտնելով ինքնուրույն պետություն ունենալու պաղեստինյան ազգային ձգտմանը:

«Ենի Ազերբայջանի» թեկնածուն Հեյդար Ալիեւն է

ԲԱՔՈՒ, 4 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երկու շաբաթ հետո Ադրբեջանում սկսվում է նախընտրական քարոզարշավը՝ հոկտեմբերի 15-ին կայանալիք նախագահական ընտրությունների կապակցությամբ: Ըստ «Ազատության», Հեյդար Ալիեւի վարչակազմի ներկայացուցիչ Ալի Հասանովը երեկ հայտարարել է, որ «Ենի Ազերբայջան» իշխող կուսակցությունը մտադիր է նախագահության թեկնածու առաջադրել գործող նախագահին:

Ընթացիկ

Հայաստանում այս կամ այն քաղաքական կուսակցության անդամ լինելը խիստ հարաբերական է: Իրականությունը վայրկենաբար կարող է փոխվել, երբ անձնական շահեր են առաջ գալիս: Նախընտրական եւ հետընտրական շրջանում այս ամենն այնքան ակնհայտ է դառնում, որ չես հասցնում զարմանալ: Իսկ եթե սրան էլ ավելանում են ընտրակա-

«Ընտրություններ» թիվ 22 ընտրատարածքում

շառների զանգվածային բաժանումը, քվեներ «առահոված» մարդկանց հետ ծագած անհամաձայնությունները փոխադարձաբար «գցելու» պատճառով եւ նախընտրական խոստումներին ու ձեռնարկներին հակադարձ համեմատական քայլերը, առա ստացվում է մի յուրօրինակ կոկտեյլ, որը միայն Հայաստանում կարող է ստացվել:

Նմանատիպ մի կոկտեյլ էր ստացվել Արարատի մարզում, ավելի կոնկրետ թիվ 22 ընտրատարածքում: Մայիսի 21-ին այս ընտրատարածքում ընդգրկված մի քանի գյուղեր (Արեւշատ, Արգանուշ եւ այլն) էր եկել «Արդարություն» դաշինքի ղեկավար Ստեփան Դեմիրճյանը: Նրան, բնականաբար, դիմավորել էին ՀԺԿ տեղի կառույցի անդամները եւ ղեկավարները: Կարծես թե տարօրինակ որեւէ բան չկա: Սակայն Ստեփան Դեմիրճյանից ընդամենը մի քանի ժամ հետո նույն երթուղով ընտրողների հետ հանդիպման եկավ այս ընտրատարածքում առաջադրված Հանրապետական կուսակցությունը ներկայացնող Հենրիկ (Զոնիկ) Աբրահամյանը, նույն ինքը՝ տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի եղբայրը: Եվ ի՞նչ եք կարծում, ովքե՞ր էին նույն հանդիսավորությամբ նրան դիմավորում: Դարձյալ ՀԺԿ-ի նույն ակտիվիստները:

Այնուհետեւ ՀՀԿ թեկնածուն Բարձրաշենում եւ մի շարք գյուղերում 100-ական դոլարներ նվիրեց ավարտական դասարաններին, 75-100 հազարական դրամ օգնություններ տարբեր խնդրանքներով իրեն դիմած անձանց: Արգանուշ եւ Դվին գյուղերի բնակիչներին երկնագույն վառելիք հասցնելու խոստումներ տվեցին եւ անգամ խողովակները բերվեցին: Հանդիպումների ժամանակ թեկնածուն եւ նրա մարդիկ խիստ պերճախոս էին խոստումներ տալու գործում: Սակայն, ավաղ, Դվինի եւ Արգանուշի



բնակիչներին վիճակված չէր տեսնելու բնական գազի մուտքն իրենց տներ, որովհետեւ խողովակներն ինչպես բերվել եւ թափվել էին, ընտրություններից հետո այնպես էլ հավաքվեցին եւ տարվեցին: Սա, թերեւս, ընտրողների ձայները շահելու ամենաթարմ եւ յուրօրինակ տեխնոլոգիան է, որն, անշուշտ, նորանոր դրսեւորումներ կունենա առաջիկայում:

Ի դեպ, այս գյուղերի գյուղապետները դաշնակցականներ են...

Իսկ, օրինակ, Վարդաշեն եւ Գեղաշեն գյուղերի գյուղապետները, չգիտես ինչու, գյուղացիներին կոչ էին անում համամասնական ցուցակում քվեարկել Միավորված աշխատանքային կուսակցության օգտին: Երեւի շատ էին ոգեւորվել «Մենք արդեն կուսակցություն ենք» լոզունգից:

Սակայն վերադառնանք Հենրիկ Աբրահամյանին: Ընտրություններից հետո նրա նյարդերի վրա սկսեցին ազդել Բարձրաշեն գյուղի քվեներ ապահովողները, որոնցից յուրաքանչյուրն իրեն է վերագրում նրան տված ձայների քանակը: Խիստ դժվար է լինելու պարզել, թե նրանցից ովքեր են սախոս կամ «գցող»:

Վերոնշյալ կոկտեյլի եւս մեկ նրբերանգ: Երդվյալ ընդդիմադիր, նախորդ խորհրդարանում ակտիվ ՀԺԿ-ական Արամայիս Բարսեղյանը («Թալանտրգի Մայիս» մականունով), որը Հենրիկ Աբրահամյանի մրցակիցն էր, դարձյալ բոլորովին «անհասկանալի» պատճառներով նախընտրական քարոզչություն գրեթե չիրականացրեց:

Այս ամենից հետո կարելի է զարմանալ միայն մեկ բանից, թե այդպիսի կոկտեյլից Արտաշատի տարածաշրջանի այդ գյուղերի բնակիչները եւ մենք բոլորս ինչպես արխառնոց կամ սամոխի խանգարում չենք ունենում:

Ա. Մ.

Այնուամենայնիվ ԿԸՀ-ն թվաբանությունից թույլիկ է

2003 թ. մայիսի 25-ի ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի պատշաճական ՀՀ ԿԸՀ-ի ամփոփիչ արձանագրության մեջ նշված թվերը՝

- տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրված եւ ստորագրված քվեաթերթիկների թիվը՝ 2.433.657 է,
- գրանցված եւ քվեաթերթիկ ստացած քվեարկության մասնակիցների թիվը, ըստ ստորագրությունների՝ 1.215.908,
- մարած (օգտագործված ընտրողների ոչ ճիշտ լրացրած եւ հետ վերադարձված) քվեաթերթիկների թիվը՝ 1.216.984,
- քվեատուփում առկա վավեր քվեաթերթիկների թիվը (վավեր են համարվում կողմ՝ գումարած դեմ քվեաթերթիկները)՝ 1.120.254,
- քվեատուփում առկա անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 98046,
- քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեաթերթիկների ընդհանուր թիվը՝ 1.195.504,
- կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 559.687,
- դեմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 552.257:

Երբ գումարում ենք դեմ, կողմ եւ անվավեր քվեաթերթիկները, ստանում ենք՝ 1.209.990, որը 5918-ով պակաս է գրանցված եւ քվեաթերթիկ ստացած մասնակիցների թվից: Երբ տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրված եւ ստորագրված քվեաթերթիկների թվից՝ 2.433657-ից հանում ենք գրանցված եւ քվեաթերթիկ ստացած քվեարկության մասնակիցների եւ մարած քվեաթերթիկների թիվը, տարբերությունը 765 քվեաթերթիկ է լինում եւ այսպես շարունակ...

Այս անճշտությունները եւ թվաբանական սխալ հաշվարկները պարզելու համար դիմեցինք ԿԸՀ անդամ Պավել Եդիգարյանին: Ահա թե ինչ ասաց նա. «Սահմանադրության հանրաքվեն, միեւնույն է, չանցած բան է եւ դրա վրա կենտրոնանալ միտք չունի: Մենք այդ թվերը տալիս ենք նույնությամբ, ինչպես ստանում ենք ընտրատարածքներից»: Իսկ այն հարցին, թե փորձե՞լ են գոնե գումարել այդ թվերը, որ մի քանի հազարի տարբերություն չտա, պրն Եդիգարյանը նշեց, որ մի քանի հարյուր կամ հազարը 2433657 թվի մեջ էական չէ, մանավանդ որ սահմանադրության փոփոխությունների հարցը չի անցել, ոչ մի էական նշանակություն չունի եւ դա է պատճառը, որ չեն ուզել որեւէ թիվ ուղղել, դրա իմաստը չկար, ժամանակ էլ չկար...

Մնում է, որ յուրաքանչյուր ընտրող հաշվիչը վերցնի ու ընտրություններից հետո օգնի ԿԸՀ-ին՝ պատկերները ճիշտ նկարելու համար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԱՐՅԱՆ

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եվրամիությունը կօգնի Հայաստանին

Երեկ սկսված Հայաստան-Եվրամիություն համագործակցության կոմիտեի 4-րդ նիստի ավարտից հետո «Արմենիա» հյուրանոցում մամուլի ասուլիս էին հրավիրել առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանը եւ ԵՄ արտաքին հարաբերությունների ընդհանուր վարչության տնօրեն Յուգոս Մինգարելին: Ինչպես նշեց Կարեն Ճշմարիտյանը, հայկական կողմը խնդրանք է ներկայացրել Եվրոպական շուկան մեր գործարարների համար ավելի մատչելի դարձնելու հարցում: Քննարկվել են նաեւ Հայաստանը տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն դարձնելու, Առեւտրի համաշխարհային կազմակերպության նորմերն ու պահանջներն իրականացնելու հարցերը:

Եվրամիության ներկայացուցիչը ողջունեց «այն տպավորիչ տնտեսական զարգացումը, որ Հայաստանն ունեցել է վերջին տարիներին»: Նա կարեւորեց գործարար միջավայրի հետագա բարելավումը երկրի տնտեսական զարգացման համար, ավելացնելով, որ երկկողմ համագործակցության զարգացման համար նոր հնարավորություններ է բացում Եվրամիության հետագա ընդլայնումը: Յուգոս Մինգարելին վերահաստատեց Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցելու, ինչպես նաեւ ԱԷԿ-ի փակման դեպքում 100 մլն եվրո տրամադրելու Եվրամիության խոստումների իրական լինելը: Նշվեց, որ 1992 թ.-ից մինչեւ այժմ Եվրամիության տրամադրած օգնությունը կազմում է 320 մլն եվրո:

Հայկական ԱԷԿ-ի փակման եւ դրան փոխարինող հզորություններ գտնելու թեման ավելի հանգամանորեն արծարծվեց: Կարեն Ճշմարիտյանը տեղեկացրեց, որ Եվրամիությունը պահպանել է նշված գումարը տրամադրելու իր խոստումը: Ավելին, այս կառույցը պատրաստվում է լրացուցիչ գումարների ներգրավման համար դոնոր երկրների համաժողով հրավիրել:

Յուգոս Մինգարելին ավելացրեց, որ ատոմակայանի փակման դեպքում փոխարինող այլընտրանքային աղբյուրներ գտնելու նպատակով Եվրամիությունն անցկացրել է ուսումնասիրություն, որի արդյունքները հայտնի կլինեն արդեն այս ամռանը:

Հայաստանը տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն դարձնելու ծրագրին անդրադառնալով, Եվրամիության ներկայացուցիչը նշեց, որ այս ոլորտը չի զարգանա, եթե հեռահաղորդակցության վիճակը չբարելավվի: Նա այն կարծիքը հայտնեց, թե Հայաստանի կառավարությունը եւ «Արմենտելը» պետք է կատարեն իրենց ստորագրած պայմանագրի պահանջները:

«Կարեն Ճշմարիտյանը պատգամավո՞ր է դառնալու, թե՞ նախարար է մնալու» հարցի առնչությամբ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարը հայտնեց, որ ինքն արդեն հրաժարվել է պատգամավորական մանդատից, իսկ նախարար նշանակվելու հարցը որոշվում է նախագահի հրամանագրով:

Եվրամիության ներկայացուցիչն անդրադարձավ նաեւ Հայաստանում տեղի ունեցած նախագահական եւ խորհրդարանական ընտրություններին, նշելով, որ բանակցությունների ժամանակ երկու կողմերն էլ համաձայնել են, որ տեղի են ունեցել թերություններ:

ԱՐԱ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԺ ընտրություններին վաճառվեցին պետության ուղեղները»

Երեկ ժուռնալիստի տանը «Ազգային ժողովրդավարական դաշինքի» ասուլիսին Արշակ Սադոյանը նշեց, որ «բազմաթիվ ազգային հարստություններ վաճառվեցին օտարներին փիչ էր, հիմա էլ Արտակ Սահրադյանի, Պավել Եդիգարյանի եւ ԿԸՀ-ի անդամների թեթեւ ձեռքով բոլորի աչքի առաջ պետության ուղեղն է ծախվում: Եթե ԱԺ-ի նախկին գումարմանը թող ու պոզզողները շատ էին, հիմա նրանք այնքան մերեդես ունեն, որ պոզելու ժամանակ էլ չունեն, դրանք մեր երկրի ուղեղը հանդիսանալ չեն կարող: Քաղցկեղը պետք է վերացնել խորհրդարանում՝ կտրել ու դեն նետել այն չարորակ ուռուցքները, որ խանգարում են մեր երկրի զարգացմանը, ուստի ուղեղն էլ պետք է լավ որակի լինի, այլ ոչ թե այլանդակվի...»: Պրն Սադոյանը նախ մանրամասն ներկայացրեց կատարված «ընտրակեղծիքների, ժողովրդի ձայնը կեղծելու, վաճառելու, իշխանությունների թողտվությունների, Հայաստանի իշխանական մարմիններն օլիգարխներին, օտարներին ծախելու» գործընթացները, որոնք 10-15 տարով Հայաստանը հետ գցեցին զարգացած երկրների շարքից: «Ամենասոսկալին, նշեց Ա. Սադոյանը, հանձնաժողովներն ամբողջությամբ կեղծեցին ընտրությունների արդյունքները եւ իրականացրին այն, ինչ ժամանակին ասվում էր՝ կարեւոր չէ, թե ժողովուրդն ինչպես է քվեարկում, կարեւորն այն է, թե հանձնաժողովներն ինչպես են հաշվում: Նաեւ մեծ դեր էին խաղում ավել տրված քվեաթերթիկները, որոնք փոխվում էին ձայների հաշվարկի ժամանակ», հավելեց նա: Այդքանից հետո անկարելի էր, որ հոտոտը վայր չդներ ԱԺ-ում իր մանդատը: Սակայն ոչ, Պրն Սադոյանը տեղեկացրեց, որ ինքն իր մանդատից չի հրաժարվի, ինչպես որոշվել է վարչության նիստում, իսկ թե «Արդարություն» դաշինքն ինչ կորոշի՝ պարզ կլինի դաշինքի վարչության նիստից հետո: Իսկ այժմ միանշանակ պարզ է, որ «Արդարություն» դաշինքը դիմելու է ՍԴ՝ ԱԺ ընտրություններն անվավեր համարելու պահանջով: ԱԺԴ-ն ՁԼՄ-ներին դիմեց խնդրանքով. «Մեզ հետ փորձեք մի քիչ փրկել այս երկիրը»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԱՐՅԱՆ

Երեւանի բոլոր շենքերը կունենան ընդհանուր ջրաչափեր

ԵՐԵՎԱՆ, 4 ՀՈՒՆԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանում արդեն տեղադրվել է 72 հազար ջրաչափ, որից 18 հազարը՝ նախորդ տարիներին: Իսկ 53 հազարը տեղադրվել է այս տարվա առաջին հինգ ամիսներին:

Ըստ Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերության մամուլի պատասխանատու Մուրադ Սարգսյանի, ուրախալի է, որ չնայած ավարտվել է արտոնյալ պայմաններով պայմանագրերի կնքման ժամկետը, այնուամենայնիվ, բնակչությունը՝ գիտակցելով խնդրի կարեւորությունը, շարունակում է պայմանագիր կնքել: Ըստ նրա, մինչեւ սեպտեմբեր Երեւան քաղաքի բոլոր բազմաբնակարան շենքերի մուտքերում կտեղադրվի ընդհանուր օգտագործման ջրաչափ: Այս ուղղությամբ քաղաքում աշխատում են 7 շինարարական կազմակերպություններ, որոնք բացի տեղադրման աշխատանքներից, կատարում են նաեւ հոսքագծերի վերանորոգում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Շրջակա միջավայրի պահպանման կարեւորության իմաստով հսկայական է անտառների նշանակությունը, քանի որ դրանք ոչ միայն հրաշալի պայմաններ են ստեղծում բնակչության առողջության համար, այլեւ երկրի ընդերքի բնական հարստությունն են՝ չափազանց օգտակար կենսաբանական, տնտեսական եւ այլ առումներով: Թեպետ Հայաստանը համարվում է սակավանտառ տարածաշրջան, այդուհանդերձ, մեր երկիրն իր անտառային ծածկույթով չի զիջել նույնիսկ հարեւան անտառաշատ երեկ, հենց այս սպառնացող վտանգն էր համախմբել «Պահպանենք մեր անտառները» միության անդամներին, որի կազմում ընդգրկված են «Հայաստանի անտառներ» հասարակական կազմակերպությունը, «Հայաստանի ծառատունկ» ծրագիրը, ԵԱՀԿ-ն, հայ կամավորների միությունը, ամերիկյան համալսարանի անտառների հետազոտման ուսումնական կենտրոնը: Հանդիպմանը հրավիրված էին նաեւ ՀՀ բնապահպանության, էներգետիկայի, տարածքային կառավարման, կրթության ու գիտության, գյուղատնտեսության նախարարները, «Հայանտառ» ՊՓԲԸ տնօրենը, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բնապահպանության նախարար Վարդան Այվազյանը չէր ներկայացել՝ շուտափույթ մարզ մեկնելու պատճառաբանությա՞մբ:

Եվ այսպես միության հիմնադիր կոմիտեի անդամները նախ խոսեցին արդեն կատարած աշխատանքների՝ մասնավորապես սոճիներն իբրեւ տնական ծառ օգտագործելու դեմ հանդես գալու, դպրոցներում այլընտրանքային տնածառերի մրցույթ անցկացնելու, Ծիծեռնակաբերդում ծառատունկ եւ մարման աշխատանքներ կազմակերպելու մասին, ապա ուրվագծեցին հեռահար նպատակներն ու խնդիրները: Դրանք են՝ Հայաստանում ընդլայնել առողջ անտառածածկույթի տարածքը՝ հասցնելով ընդհանուր տարածքի 25 տոկոսի, օրենսդիր մարմինների եւ հաղորդակցությունների հետ զարգացնել համագործակցությունը, բարձրացնել հասարակության իրազեկությունը՝ շրջակա միջավայրի պահպանման էթիկայի ուղղությամբ, մշակել անտառային նոր քաղաքականություն եւ նվազագույնի հասցնել փայտն իբրեւ վառելանյութ օգտագործելը՝ զարգացնելով այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը:

Վերոհիշյալ հարցերը մանրակրկիտ վերլուծելու համար որոշվեց ստեղծել 5 աշխատանքային խմբեր, որոնց առաջարկությունները կդրվեն միության հետագա գործունեության հիմքում: Սակայն դեռեւս լուծում չի գտել մեզանում ամենաէական հարցերից մեկը՝ միության պետական գրանցումը, առանց որի ինքնըստինքյան հասկանալի է, թե ինչ քաղաքացիների մեջ կհայտնվեն կոմիտեի անդամները, մինչեւ անգամ հարցականի տակ կդրվի գործունեության արդյունավետությունը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Կպահպանե՞նք մեր անտառները

Առայժմ ծառ հատողները տնկողներից շատ են...

Վրաստանին: Անտառահատման առանձնակի միտում նկատվել է վերջին 70 տարիների ընթացքում: Բոլորիս է հայտնի, որ անտառահատումների ամենամեծ ծավալը գրանցվեց 1992-1995 թթ. էներգետիկ ճգնաժամի տարիներին: Սակայն, դժբախտաբար, այդ տարիների վնասակար սովորությունից այսօր դեռ ոչ բոլորն են ձերբազատվել: Անտառահատումները շարունակվում են՝ պատճառելով աղետալի վնասներ ու առաջացնելով դժվար լուծելի խնդիրներ: Նշենք դրանցից մի քանիսը. հողերի էրոզիա եւ սողանքների առաջացում, տեղանքի կլիմայի փոփոխություն, որ հանգեցնում է ջրային պաշարների կորստի, անապատացման եւ էքստրեմալ եղանակի, հողերի բերրիության անկում, բերքատվության նվազում, կենսաբազմազանության կորուստ, անտառային պաշարների կորուստ եւ այլն: Միայն որպես վառելիք Հայաստանում տարեկան օգտագործվում է 500 000 խմ փայտ, այսինքն՝ այդ նպատակով հատվում է 4000 հա անտառ: Հատումները հիմնականում կատարվում են կամ օրինաբար՝ թույլտվությամբ, կամ անօրինաբար՝ բիզնեսի համար, կամ էլ առանձին անհատների կողմից: Համաշխարհային բանկի հաշվարկներով՝ հատումները շարունակվելու դեպքում 20 տարի հետո Հայաստանում առհասարակ կվերանան անտառները:



Շրջակա միջավայրի պահպանման միջազգային օրվա նախօրեին՝ խարարները, «Հայանտառ» ՊՓԲԸ տնօրենը, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բնապահպանության նախարար Վարդան Այվազյանը չէր ներկայացել՝ շուտափույթ մարզ մեկնելու պատճառաբանությա՞մբ:

Եվ այսպես միության հիմնադիր կոմիտեի անդամները նախ խոսեցին արդեն կատարած աշխատանքների՝ մասնավորապես սոճիներն իբրեւ տնական ծառ օգտագործելու դեմ հանդես գալու, դպրոցներում այլընտրանքային տնածառերի մրցույթ անցկացնելու, Ծիծեռնակաբերդում ծառատունկ եւ մարման աշխատանքներ կազմակերպելու

Վերջին տարիներին աճել է անօրինական միգրացիայի հոսքը դեպի Չեխիա

Մայիսի 20-23-ը ՀՀ արտգործնախարարության եւ կառավարությանն առընթեր Միգրացիայի ու փախստականների վարչության պատասխանատուները Չեխիայում հանդիպել են միգրացիայի ոլորտի պատասխանատուների հետ եւ քննարկել անօրինական միգրացիային առնչվող հարցեր: Մի շարք խնդիրներ են համաձայնեցվել՝ հիմք դառնալով երկու երկրների ռեադմիսիայի պայմանագրի ստորագրման համար: Կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության պետ Գագիկ Եգանյանն **«Ազգի»** հետ զրույցում նշեց, որ Չեխիայի հետ բանակցությունները բավականին բարդ էին, առանձին հարցերի շուրջ տարաձայնություններ կային: Այդուհանդերձ, հաջողվել է ռեադմիսիայի պայմանագիրը նախապատրաստել մեր երկրին հարմար դրույթներով:

Չեխիայի հետ միգրացիոն քաղաքականության հստակեցումն առավել արդիական է դառնում՝ հաշվի առնելով դեպի այդ երկիր (նաեւ Ավստրիա) անօրինական միգրանտների վերջին տարիներին աճած հոսքը: Մասնավորապես, եթե մինչեւ 90-ականների կեսերն ադրբեջանի հայցի համար դիմում էր 150-200 հայաստանի քաղաքացի, 2000 թ.-ից այդ թիվն աճել է 4-5 անգամ: Ըստ Գագիկ Եգանյանի, երեւույթի կազմակերպված լինելն առավել ցայտուն է Չեխիայի դեպքում. կան հանցավոր խմբեր, որոնք այս կամ այն կերպ գտել են ուղի Չեխիա մուտք գործելու եւ, օգտվելով սոցիալ-տնտեսական վատթար իրավիճակից ու միգրանտի անիրազեկությունից, պատրաստ են «օգնել» Հայաստանից մեկնել ցանկացողներին: Թե ինչ է սպասում անօրինական միգրանտին տվյալ երկրի սահմանն անցնելուց հետո, արդեն կազմակերպիչների խնդիրը չէ: Իսկ դյուրահավատ քաղաքացին բախվում է միգրացիոն խիստ օրենքների. 2004 թ. եվրամիության անդամ դառնալ պատրաստվող Չեխիան կիրառում է միգրացիոն նույն խիստ քաղաքականությունը, ինչ եվրամիության երկրները:

Ռեադմիսիայի պայմանագրերի կնքումը եւ վերադարձի կազմակերպումը մեկն է այն ուղղություններից, որոնցով իրականացվում է պայքարը ոչ լեգալ միգրացիայի դեմ: Կառավարության քաղաքականության մեջ կարեւորվում են նաեւ հասարակության տեղեկացվածությունը եւ ռեինտեգրացիայի ծրագրերը:

Մ. Հ.

Բրյուսելում փաստագրական ցուցահանդես եւ գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը

Բրյուսելի միջազգային ընկերությունների պալատից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ այնտեղ հունիսի 18-19-ը Բեռլինի «Հայաստանի վերաբերյալ փաստավավերաթղթերի կենտրոնի» կազմակերպությամբ լուսանկարների ցուցահանդես է բացվելու, որը կրելու է «Հայոց ցեղասպանությունը. կենդանի պատմություն» խորագիրը: Կենտրոնը հիմնվել է 1985-ին դոկտ. Ժիրայր Քոչարյանի եւ դոկտ. Թեսա Հոֆմանի նախաձեռնությամբ, եւ փաստագրական լուսանկարները նախապես ցուցադրվել են Հայդելբերգում (1999-ի նոյեմբերին), Քյոլնում (2002-ի հունվարին), Ֆրանկֆուրտում (2002-ի փետրվարմարտին) եւ Լոնդոնում (2003-ի հունվարին):

Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանության պատմական փաստերը եվրոպական հասարակությանը ներկայացնելու նպատակով հունիսի 19-ին վերոհիշյալ կենտրոնում տեղի է ունենալու նաեւ «Կոտորած եւ վերածնունդ» խորագրով գիտաժողով, որին մասնակցելու են Իվ Թեոնոնը (Ֆրանսիա), Հելեն Փիրալյանը (Ֆրանսիա), Քլեր Տետեյանը (Ֆրանսիա), Թեսա Հոֆմանը (Գերմանիա), Կլոդ Մութաֆյանը (Ֆրանսիա), Արմեն Հախնազարյանը (Գերմանիա), Ալի Էրթեմը (Գերմանիա) եւ Հայկ Դեմոյանը (Հայաստան): Գիտաժողովի կազմակերպիչներն են եվրախորհրդարանի անդամներ Յոնաս Շոսթեդը եւ Լենարտ Սագրեդոսը, եվրոպայի «Հայկական ասոցիացիաների ֆորումի», Հունաստանի «Հայաստան» սոցիալ-մշակութային կենտրոնի, Ֆրանսիայի «Ազատ ասոցիացիայի», Մեծ Բրիտանիայի «Արշավ հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման» կազմակերպության, Լատվիայի «Հայոց մշակութային կենտրոնի եւ Կիպրոսի «Ազատ ձայն» ամսաթերթի համագործակցությամբ:

Հ. Ծ.

«Եվրոպա» հյուրանոցը Երեւանում

Վարդագույն տուֆի մեր ընկալումների հաղորդն օրըստօրե կերպարանափոխվում է, ինչ-որ տեղ նահանջում, սպասվում: Երեւանի կենտրոնում՝ հանրապետության փողոցում, արդեն քանի օր փակցրած պատասը հուշում է, որ շուտով իր դռները կբացի «Եվրոպա» հյուրանոցային համալիրը: Անունն արդեն հետաքրքրություն է առաջացնում, արտաքին տեսքը՝ նույնպես: Հյուրանոցային կառույցներին բնորոշ արտաքին շեղ էֆեկտներն այստեղ բացակայում են: Երանգարկ շենքի գունային կոմպոզիցիան՝ վերին հարկի մոխրագույն ֆոնը, ապա բույլ վարդագույնը՝ ծերմակի համադրումով եւ կրկին մոխրագույնը՝ պարզ, զուտ ճարտարապետական լուծումներով, ինքնատիպություն են հաղորդում կառույցին՝ առաջացնելով մի քիչ անտվոր, բայց էսթետիկորեն հաճելի զգացում:

Հաշվի առնելով հյուրերի բազմաբնակությունը, ներքին հարդարանքը զուգահեռ սկսվել է նաեւ հյուրընկալումը: «Եվրոպա» հյուրանոցի գլխավոր կառավարչի տեղակալ Մարի Չենջիրջյանը հյուրանոցի նկատմամբ առաջացած մեծ հետաքրքրությունը (նույնիսկ դրսի անցորդների) պայմանավորում է հյուրանոցի առանձնահատկություններով, ինչպես եւ կառույցի արտաքին էսթետիկայով, որի ընդհանուր բնութագրումը կարելի է հենց կարգախոսի մեջ գտնել՝ Hotel de charme, այսինքն՝ հմայք ունեցող հյուրանոց: Իսկապես, երեւանի համար թերեւս եզակի այս կառույցի հմայքը՝ արտաքին եւ ներքին հարդարանքի (սկսած ծաղկամաններից) ինքնատիպության մեջ է: Ճարտարապետական ոճով տիպիկ եվրոպական հյուրանոցներին բնորոշ «Եվրոպան» ցանկալի կդառնա նաեւ իր սպասարկման բարձր մակարդակով, մաքրությամբ եւ աշխատանքով՝ շահեկանորեն տարբերվելով մյուսներից:

Եռահարկ հյուրանոցը (դրսից վերին հարկը պատուհանների յուրատեսակ կտրվածքի պատճառով թողնում է ծեղնահարկի տպավորություն, սակայն դրանք հյուրանոցային սովորական համարներ են) ունի 47 սենյակ. համապատասխանաբար՝ 16, 15, 16, որոնք տեղաբաշխված են մեկտեղանոց (single) եւ երկտեղանոց (double) մահճակալ սկզբունքով՝ հյուրանոցային ավելի բարձր պայմաններով, double-large համարները ունեն ավելի մեծ եւ հարմարավետ մահճակալ: Կան 2 ավելի շքեղ կահավորումով լյուքս (junior suite) համարներ, նաեւ գրեթե գիդենական (executive)՝ ճոխ եւ ընդարձակ: Սենյակների ներքին հարդարանքը համապատասխանում է ընդհանուր արտաքին ոճին: Ամենուրեք իշխողը մեղմ, բաց, այլը չհոգնեցնող երանգներն են, գրեթե ծերմակ (պատեր, վարագույրներ), համարներում կան հեռուստացույց, հեռախոս, մինի-բար, գործում են շուրջօրյա տաք եւ սառը ջրամատակարարում եւ օդափոխության կենտրոնական համակարգ՝ ըստ տարվա եղանակների: Գեղահարդարումը կատարվեն նկարները եւ խիստ ինքնատիպ ծաղկամաններում աճող բույսերը:

Հետաքրքրական է նաեւ հյուրանոցի ներքին ճարտարապետական ոճը, այստեղ նախասրահ (lobby bar) հասկացությունը շատ ավելի հարմարավետ է, քան սպասասրահ լինելուց, այստեղ գործում է նաեւ բարը: Նախասրահի հարեւանությամբ տեղավորված է նախաճաշի սենյակը: Առավոտյան տրվող նախաճաշի գումարը (5 դոլար) մտնում է համարի արժեքի մեջ: Բնականաբար, գործում են կենցաղային տարբեր ծառայություններ, ինչպես նաեւ բիզնես-կենտրոն կոչվող ծառայությունը համակարգչով (այդ թվում նաեւ՝ ձեռքի, շարժական՝ laptop) աշխատելու հնարավորություն է ստեղծում՝ ինտերնետայի՞ն կապի միջոցով նաեւ:

Ավտոմեքենաների կայանատեղիի (parking) համար հյուրանոցը ժամանակավորապես «զբաղեցրել է» դիմացի մայթին՝ RIA նախկին բանկի շենքին հարող տարածքը:

Իսկ դեռեւս չգործող մյուս ծառայությունները ժամանակի ընթացքում կհամալրվեն: Ներքին հարկում նախատեսված է ստեղծել զվարճանքի կենտրոն, որ կարող է լինել գիշերային բար, ջազակլուբ: Իհարկե, այս ամենը՝ ոչ առաջիկա ամիսներին: Պահանջվում է ժամանակ ռեստորանային ճոխ համակարգ ստեղծելու համար նույնպես:

Շուտով հյուրանոց կտեղափոխվի «Սաթերասուր-Սեւան» գործակալությունը, որի սեփականատերերի սեփականությունն է նաեւ նորակառույց «Եվրոպան»: Այդպիսով ենթադրելի է, որ երեւան-Փարիզ-երեւան չվերթի ուղեւորներն արդեն մեկ ծառայությամբ հոգան նաեւ իրենց կացարանի հարցերը եւ ամենայն հավանականությամբ տեղավորվեն նորաբաց «Եվրոպա» հյուրանոցում: Ըստ հյուրանոցի գլխավոր կառավարչի տեղակալ Մարի Չենջիրջյանի, հյուրերի մեջ բիզնեսմենների թիվն ավելի շատ է, այսպես ասած բիզնեսմենների հյուրանոց է, որին որոշակիորեն նպաստում են նաեւ քաղաքի կենտրոնում ունեցած դիրքը, իսկ հիմնականում՝ պայմանները:

Արտաքին ճարտարապետության, ներքին հարդարման պարզ, ավելորդ պաճուճանքներից զերծ, նրբաճաշակ դիզայներական լուծումների, եվրոպական մոտեցումների, հարմարավետ եւ հանգստաբեր պայմանների շնորհիվ հյուրանոցի ղեկավարությունն առաջիկա ամիսներին ակնկալում է այցելուների առատ հոսք:

ՄԵԼՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

107 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Վանի ինքնապաշտպանության դասերը

1896 թ. հունիսի 3-ից սկսվեց Վան քաղաքի խիզախ, հերոսական ինքնապաշտպանությունը, որի նախաձեռնողն ու կազմակերպիչը եղավ Արմենական կուսակցությունը: Նախօրյակին արմենականների առաջնորդ Սկրտիչ Ավետիսյանը հրավիրում է կուսակցական պետերի խորհրդակցական ժողով, որի առանցքը կազմում էր մոտեցող արհավիրքի դիմագրավումը: Արմենականների առաջնորդը հիմնավորում է փոխադարձ համագործակցության եւ համերաշխության անհրաժեշտությունը:

Բարեբախտաբար, այդ տագնապալից օրերին հայոց կուսակցությունների տեղական առաջնորդները գործեցին միակամ ու համերաշխ: Պաշտպանողական մարտավարության ծրագիրը, որը նախապես պատրաստել էր Մ. Ավետիսյանը, դաշնակցական Պետոյի (Ալ. Պետրոսյան) եւ հնչակյան Մարտիկի (Մ. Սարուխանյան) հետ համախորհուրդ, հունիսի 4-ից դրվում է գործողության մեջ:



Սկրտիչ Ավետիսյան (Թեղեմեզյան)

Քաղաքում կառուցվել էին մոտ 33 դիրք-պատնեշներ: Հայկական թաղամասերը վերածվել էին ճամբարի: Պաշտպանվելու համար օգտագործվում էր ամեն ինչ, բնական յուրաքանչյուր ամրություն: Վանի ինքնապաշտպանությունը տեւեց 1896 թ. հունիսի 3-ից 10-ը: Դիմադրությունը կազմակերպված էր մարտավարական լավագույն սկզբունքներով: Այն կարող էր երկար շարունակվել, որը խիստ անհանգստացնում էր թուրքական կառավարությանը եւ Վանի անգլիական հյուպատոս Ուլյամսին: Վերջինս մտավախություն ուներ, թե դա առիթ կտա սահմանակից Ռուսաստանի ռազմական միջամտությանը: Արյունարբու Սաաէդդին փաշան զգալով, որ ռազմական միջոցներով անհնար է ընկճել հայերի դիմադրությունը, անգլիական հյուպատոսի միջոցով սկսում է դիվանագիտական խաղադավանքները: Հյուպատոսների անունից ինքնապաշտպանության ղեկավար Մ. Ավետիսյանին առաջարկվում է հանձնվել այն պայմանով, որ կռվողների զենքը հանձնվի թուրքական կառավարությանը, իսկ ապստամբների ղեկավարները տարվեն որեւէ եվրոպական նավահանգիստ: Խմբապետական խորհրդակցությունից հետո Զինվորական մարմինը մերժում է այս առաջարկները:

Միաժամանակ կռիվը նորից է սաստկանում: 1896 թ. հունիսի 8-ին Ուլյամսը կռիվը վերջացնելու պատրվակով նոր ժողով է գումարում, որին մասնակցում են եվրոպական մի շարք հյուպատոսներ, ինքնապաշտպանական ուժերի ղեկավար Մ. Ավետիսյանը՝ խառնսուն փորձված հայդուկների հետ:

Ժողովում արմենականների ղեկավարը հնչած մեղադրանքներին ի պատասխան մեկ անգամ եւս հիմնավորում է, որ իրենց մղած կռիվն ինքնապաշտպանության կռիվ է:

Վերջապես համաձայնություն է ձեռք բերվում, որ հայ մարտիկները թողնեն Վանն այն պայմանով, որ ճանապարհին չտիտի հետապնդվեն թուրքական եւ քրդական ուժերի կողմից:

Զինված խմբերը, թողնելով իրենց դիրքերը, շարժվում են դեպի Վարագա վանք: Վարագում միջկուսակցական ժողովից հետո որոշվում է, որ բոլորը միասին նահանջելու են մի ուղղությամբ: Հաջորդ օրը, սակայն, այդ պլանը փոխվում է: Դաշնակցականները ու հնչակյանները որոշում են առանձին նահանջել: Ինչ խոսք, այս որոշումը ճակատագրական սխալ էր, որն զգալիորեն թուլացրեց հայ մարտիկների ուժերը:

Արմենականների խումբը, որն ամենաստվարաթիվն էր, շուրջ 600 մարտիկ, պաշտպանական անհրաժեշտ մարտակարգ ընդունելով, նույնպես առանձին բռնեց նահանջի ճամփան: Սակայն խումբը հենց սկզբից հետապնդվեց թուրքական եւ քրդական մեծաթիվ ուժերի կողմից: Խմբի ցանկացած տեղաշարժ աչալուրջ հսկում էին թուրքական իշխանությունները: Անվերջ ընդհարումներից հետո արմենականների խումբը Խանասորի դաշտում ընկնում է շրջապատման մեջ եւ գրեթե լիովին բնաջնջվում: Նույն ճակատագրին արժանացան նաեւ հնչակյան եւ դաշնակցական խմբերը:

Թեեւ ինքնապաշտպանության ուժերը վերջնական արդյունքում պարտություն կրեցին, սակայն պետք է նշել, որ կռվի ընթացքում հայկական ուժերը հաջողությամբ դիմադրելով, փաստորեն հաղթեցին թշնամուն: Ինքնապաշտպանական խմբերը լոկ նահանջի հարցում չմիաբանվեցին, նահանջեցին առանձին-առանձին, ուստի ընկան շրջապատման մեջ եւ կոտորվեցին: Դա կատարվեց նաեւ այն բանի հետեւանքով, որ հայերը վերջին հավատացին օտարերկրյա դիվանագետների սին խոստումներին: Իսկ վերջիններս հավաստիացրել էին հայոց ինքնապաշտպանության ղեկավարներին, որ թուրքական իշխանությունների կողմից որեւէ հետապնդում չի լինելու: Եթե հայկական ուժերը հենվեին միայն սեփական զենքին եւ չնահանջեին, հավանաբար հերոսամարտը կտար այլ՝ հայերիս համար նպաստավոր արդյունք:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

«Ես ունեմ գաղափարներ եւ համառություն, որով եւ պաշտպանում եմ գաղափարներս»

Գրող, հրապարակախոս Ալվարդ Պետրոսյանն ակտիվ հասարակական եւ քաղաքական գործիչ է: Իր կյանքի մի շրջանում 70-80-ական թթ. նա բուռն գրական ստեղծագործությամբ էր զբաղված: Եղել է նաեւ «Առագաստ» կանանց շաբաթաթերթի գլխավոր խմբագիրը: Երբ սկսվեց դարաբաղյան շարժումը, նա ընդլայնեց իր գործունեությունը: Սկզբում տարվեց հասարակական աշխատանքով: 1994 թվականից ղեկավարեց ՀՕՄ-ի հայաստանյան վարչությունը, որի կենտրոնը ԱՄՆ-ում է: 1999 թվականից Ալվարդ Պետրոսյանը ԱԺ պատգամավոր է: Նա նվիրված մայր է եւ ամուսնու՝ դերասան Լորենց Արուշանյանի եւ որդու՝ նկարիչ Նարեկի ստեղծագործությունների առաջին քննադատներից մեկը:

– Շատ բազմազբաղ պարագայում հաջողվո՞ւմ է ժամանակ տրամադրել գրական ստեղծագործությանը:

– Ես կարծում եմ, որ գրականությամբ եւ ընդհանրապես արվեստով կարող են զբաղվել մարդիկ, ովքեր զբաղված են: Ես, իհարկե, չեմ թողել արձակը (ես երդվյալ արձակագիր եմ), բայց ըստ երեւույթին պրոդուկցիայի այս տասնամյակը շատախոսությամբ ինձ մի փիչ հոգնեցրեց: Եվ ես վերջին շրջանում շատ ակտիվ չափածոյի եմ անցել: Հույս ունեմ, որ այս տարի գիրք կտպագրեմ: «100 բանաստեղծություններ»՝ այդպես եմ նախատեսել գրքի խորագիրը: Հրապարակախոսությունը, էսսեն ես նույնպես լուրջ գրական ժանր եմ համարում: Ճիշտ է, Հայաստանում այն բարձր չեն գնահատում եւ վերջերս դարձել է պարզապես ամենախոսություն: Անհրաժեշտության դեպքում ես դիմում եմ այդ ժանրին: Եվ այդ իմաստով համարում եմ, որ միշտ զբաղվել եմ գրականությամբ, երբեք չեմ ընդհատել:

– Ցուրաքանչյուր ստեղծագործողի համար անհրաժեշտ է ֆինանսական աջակցություն: Այլ խրախուսանքները նշանակություն ունե՞ն իսկական ստեղծագործողի համար:

– Եթե մարդը շահանքն իր վաստակի համար է ստանում, այլ ոչ թե որպես բարձրաստիճանավորների ֆավորիտ, իհարկե, շատ հաճելի է: Բայց դա երկրորդական նշանակություն ունի: Իմ բուռն ստեղծագործական տարիներին գրական դաշտում շատ տխուր երեւույթ էր տիրում: Այդ ժամանակ գրական ստեղծագործական չափանիշները սուբյեկտիվ էին, ճանաչում էին ստանում ֆավորիտները: Մի անգամ դառը սարկազմով խոսեցի այդ մասին գրական պլենումներից մեկի ժամանակ: Դրանից հետո նախընտրեցի ազատությունը, ինչն այդ տարիներին ավելի գայթակղիչ էր: Ստեղծագործողները փառասեր են եւ ուզում են իրենց բոլոր թեւիկները, գույները ի ցույց դնել: Եվ դրա մեջ մանկական, անմիջական մի բան կա: Բայց երբեք չի կարելի այդ ամենն արժանապատվության եւ ազատության հաշվին անել: Ընտրելով ազատությունը, ես այլեւս ոչ մեկի կամքից եւ քմայքից կախված չէի: Ես ունեմ իմ գաղափարները եւ համառությունը, ինչի շնորհիվ դրանք պաշտպանում եմ: Բայց առանց ֆինանսական աջակցության դժվար է գործել: Իմ աշխատանքի բերումով ես շփվում եմ սփյուռքի հետ եւ հնարավորություն ունեցել եմ գիրք տպելու: Բայց ես նախընտրեցի բարեկամներիս ֆինանսական միջոցներով առաջին հերթին շնորհալի գրողներ Արմեն Հովհաննիսյանի եւ լուսահոգի Մանուկ Մնացականյանի ու Սիփան Շիրազի գրքերը հրատարակել: Սերժ Սարգսյանը խոստացել է դրամական միջոցներ տրամադրել հրատարակելու Արա Նազարեթյանի՝ արցախյան պատերազմին նվիրված գիրքը եւ Մանուկ Մնացականյանի նվիրումների գիրքը: Ես խնդրեցի, որ վերահրատարակեն 20-րդ դարի լավագույն պատմավեպերից մեկը՝ Միքայել Շաքիրյանի «Արծաթե դարը»: Գիրքը թարգմանվել էր Ֆրանսերեն եւ մեծ հաջողություն ունեցել Ֆրանսիայում: Ինչ վերաբերում է իմ գրքերի հրատարակմանը, ապա համարում եմ, որ ես ինքնադրսեւորման այլ ասպարեզներ էլ ունեմ: Ի վերջո, գրականությունը մնայուն է, եւ ես դեռ կհասցնեմ իմ գրքերը տպագրել:

– Նոր զգացողություններ ձեռք բերելու նպատակո՞վ է պայմանավորված ձեր քաղաքական հետաքրքրությունը:

– Ես այն տարիքում չեմ, որ նոր զգացողություններ փնտրեմ: Ինձ մոտ ընդգծված գաղափարական հետաքրքրությունների ոլորտ է, որը դաստիարակությունից է գալիս: Ես ակտիվ մարդ եմ, ունեմ իմ հստակ դիրքորոշումը: 17 տարեկանից տպագրվել եմ Բեյրութում հրատարակվող, սովետական ընթերցողի համար փակ «Բագին» ամսագրում: Հետո արդեն սկսեցի տպագրվել «Գարունում», «Ավանգարդում»: Տարիներ հետո «Բագինի» գլխավոր խմբագիր Պողոս Սնապյանն ինձ ասաց. «Դու մերն ես»: Այսինքն՝ դաշնակցության գաղափարները եւ իմ ստեղծագործությունները համահունչ էին, նույն ուղղությունն ունեին: Իմ դիրքորոշումը ձեւավորել եմ մի ընտանիքում, որտեղ խիստ ազգային նկարագիր էր տիրում, որը հետո ժառանգեց որդիս՝ Նարեկ Արուշանյանը:

– Դուք կրկին ԱԺ պատգամավոր եք: Ինչպիսի՞ն կցանկանայիք տեսնել նոր կազմավորված ԱԺ-ն:

– Այս ընտրությունները համարում եմ գաղափարազուրկ, դրանք ազնիվ չեն եղել:

Ես որոշակի ֆունկցիաներ ունեմ ԱԺ-ում, ինչը, հուսով եմ, կիրագործվի: Կցանկանայի, որ ԱԺ-ում ավելի շատ կանայք ներգրավված լինեին: Այդ դեպքում ԱԺ-ն ավելի քաղաքակիրթ դիմագիծ կստանա: Տղամարդիկ կանանց ներկայությամբ ձգտում են իրենց սեռին հատուկ հատկանիշներով հանդես գալ՝ ասպետական, գալանտ, զուսպ, խելացի: Ես երբեք խելակորույս ֆեմինիստ չեմ եղել եւ ազգային ավանդական հայի իշխանության կողմնակից եմ: Բայց հասարակության նորմալ զարգացման համար անհրաժեշտ է ներդաշնակ հավասարակշռություն: Եվ հետո մեր կանայք ցույց տվեցին, որ կամքի ուժ եւ հսկա կրթական ներուժ ունեն, ուստի ինչո՞ւ չպիտի մասնակցեն ԱԺ աշխատանքներին: Ասենք, Կարինե Դանիելյանի գիտելիքները էկոլոգիայի հարցերում համաշխարհային հանրությունն է գնահատում, իսկ մեր պետությունը՝ ոչ: Կարելի է բազմաթիվ կանանց անուններ թվարկել: Նորա Հակոբյանին կանանց հասարակական գործունեության ակտիվացման ոլորտում մասնագետ եմ համարում: Հենց նա ինձ ներգրավեց հասարակական գործի մեջ:

– Դուք երկու անգամ Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունն եք պաշտպանել: Անձնական համոզմունքներից ելնելո՞վ եք հանդես այդ որոշման, թե՞ ենթարկվել եք կուսակցական կարգապահությանը:

– Մեր կուսակցական կարգապահությունն անձերի կամքի գումարելիներից է գալիս: Մենք ներքեւից վերեւ ենք գնում: Կուսակցությունը վերեւից հրահանգներ չի իջեցնում: Ե՛վ 1998-ին, ե՛ւ այժմ ես այն մարդկանց թվում եմ, որոնք պնդում են, որ պետք է Ռ. Քոչարյանի թեկնածությունը պաշտպանել, ինչը մեր երկրի կայացման եւ ամրապնդման համար կարեւոր է: Բայց դա չի նշանակում, որ մենք բոլոր հարցերում համաձայն ենք նրա հետ: Մեզ մի շարք չլուծված հարցեր են անհանգստացնում՝ կադրային քաղաքականությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, կլանների դեմ ուղղված հակամոնոպոլ քաղաքականությունը: Իրավական պետություն ստեղծելու ընթացքում սոցիալական արդարություն ապահովելու համար անհրաժեշտ է պայքարել սոցիալական բեւեռացման դեմ, որ հասարակությունում չլինեն ծայրահեղ հարուստներ եւ ծայրահեղ աղքատներ: Ի տարբերություն մյուս կուսակցությունների, մենք երկակի ստանդարտներով չենք ուղղորդվել: Արդարությունից խոսելիս ոչ ոք չի կարող մեզ մեղադրել ստվերային գործունեության մեջ: Մենք քննություն տված, փորձառու մարդու ենք ընտրել: Ինձ համար կարեւոր է Ղարաբաղի հիմնահարցի ճիշտ լուծումը, ինչին, իմ տեսակետից, մենք կհասնենք գործող նախագահի օրոք: Մենք միայն նախագահ չենք ընտրել, գերագույն հրամանատար ենք ընտրել, որը կարող է կայունություն եւ անդորր պահպանել մեր երկրում:

– Ինչպիսի՞ն եք դուք տանը, սիրո՞ւմ եք զբաղվել տնտեսությամբ:

– Իմ տունը ես շատ եմ սիրում: Այստեղ իմ ծեռագիրն է, շունչը, ճաշակը: Ինձ համար թանկ են իմ գրքերը, նկարները, որոնք ինձ հարազատներս եւ ընկերներս են նվիրել: Ինձ լավ տնտեսուհի եմ համարում: Ամեն ինչ իմ տանը պետք է տեղում լինի, չեմ սիրում թափթփվածություն: Հաճույքով եմ պատրաստում, եւ ասում են, որ համով է: Տարին մեկ-երկու անգամ դեպրեսիվ վիճակում եմ լինում: Այդ օրերին տնեցիներին խորհուրդ եմ տալիս իրենք իրենց պահեն:

–Այնուամենայնիվ, հակառակ հասարակական, քաղաքական գործունեության, Դուք մնում եք կանացի: Ո՞րն է դրա գաղտնիքը:

– Կանացիությունն ավելի եմ գնահատում, քան գեղեցկությունը: Այն չի թառամում, մնայուն է: Եթե դուք ինձ կանացի եք համարում, ես շնորհակալ եմ: Քաղցր-մեղր, ծեւական կոկետություն չեմ ընդունում, անճաշակ է: Չրիկ կոկետությունը՝ նույնպես: Չնայած տարիքիս (ես արդեն տասիկ եմ) անտեսանելի կոկետություն պահպանվել է իմ մեջ: Երբեք չեմ խուսափել կանացի սկզբից: Մանկուց հայրս ներշնչել է ինձ ուժեղ լինել: Անպաշտպան, խեղճ կնոջ մեջ ինչ-որ անհուսալի եւ վտանգավոր բան էր տեսնում: Չէ՞ որ էգն է խնամում եւ պաշտպանում իր ձագին, ասում էր նա: Հորս դաստիարակությունը տվել է իր արդյունքը: Բայց կանացի հեզությունն ընդունում եմ: Տանը, ընտանիքում ես հեզ եմ: Կանանց հարաբերությունների մեջ կարեւորում եմ նաեւ, երբ մի կինը տեսնում եւ գնահատում է մյուս կնոջ արժանիքները: Դա մեծ մշակույթ է, ինչին պետք է ձգտի մեզնից յուրաքանչյուրը: Կինը պետք է պահպանի իր բուրմունքը, որ հիշողություն թողնի:

Ընկերությունն եմ գնահատում եւ շատ ընկերներ ունեմ: Մենք հավատարիմ ընկերներ ենք, ինչը մեր ժամանակների համար մեծ արժեք է:

ԱՐԴԱ ԱՐՇԱԿՅԱՆ

«Չի կարելի հերքել տեղի ունեցած ողբերգության փաստը: Պատմությունը չոտեսf է մոռանա դա. մեկ կամ երկու մարդ չի մահացել, ոչնչացվել է ավելի քան 1,5 մլն ժողովուրդ, իսկ մեղավորները Օսմանյան եւ Ռուսական կայսրություններն էին», ասում է վրաց-ադրբեջանական «Նոր մտածելակերպ» թերթի խմբագիր Նիյազ Հուսեյնովը:

Թբիլիսիում լույս տեսնող վրաց-ադրբեջանական «Նոր մտածելակերպ» թերթի խմբագրի վերը հիշատակած մեջբերումները վերցրել ենք Թբիլիսիում լույս տեսնող մեկ այլ թերթից՝ «Նոր սերունդ»-ից, որի 5-րդ համարը լույս է տեսել մայիսին եւ գրեթե ամբողջությամբ նվիրված է Հայոց ցեղասպանությանը:

«Նոր սերունդ»-ի հրատարակիչը Վրաստանի հայկական երիտասարդական միությունն է, խմբագիրը՝ Թամարա Հովասափյանը: Ամսաթերթը լույս է տեսնում ռուսերենով: Թերթի երրորդ էջում «Հայկական հարց» խորագրի տակ, հիշատակվում են այն երկրները, խորհրդարանները եւ միջազգային կազմակերպությունները, որոնք ճանաչել են 1915 թ. Ցեղասպանությունը: Մեջբերումներ են արված Հռոմի պապ Հովհաննես Պողոս երկրորդից, 1912-1915 թթ. Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հանս Վանհենհեյմից, 1913-16 թթ. Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուից, Դեյվիդ Լլոյդ Ջորջից, Ուինսթոն Չերչիլից, Ալեքսանդր Կվաշնեւսկուց, Բորիս Ելցինից:

10-րդ էջում տպագրվել է Յու. Բարսեղովի «Հինգ դար ցեղասպան պետության իշխանության տակ» հոդվածը, 11-րդ էջում՝ վրացական մամուլի արձագանքներն են՝ նվիրված ապրիլի 24-ի տարելիցին: Այսպես, «Մթավարի գազեթին» (թարգմանաբար՝ «Գլխավոր թերթ») ապրիլի 25-ի համարում գրում է. «1915 թ. Ցեղասպանության փաստը պաշտոնապես ճանաչել են 14 պետություններ, ԱՄՆ 31 նահանգներ: Ուշագրավ է, որ Ջորջ Բուշ կրտսերի նախընտրական խոստումներից մեկը հենց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու խոստումն էր: Չնայած ԱՄՆ Սենատում հայկական լոբբիի ակտիվությանը, Բուշը չի շտապում կատարել իր խոստումը»:

«Նոր սերունդ»-ի 4-րդ եւ 5-րդ էջերում զետեղված են Ցեղասպանության 88-րդ տարելիցի մասին պատմող հրապարակումներ, որոնք ապրիլի 24-ին կազմակերպվել էին Թբիլիսիում: Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն վարդապետ Միրզախանյանն ասում է. «1915 թ. Հայոց ցեղասպանությունը մեծ ողբերգություն է մեր ժողովրդի կյանքում եւ ամեն մարդու համար, ով տեսնում է, թե ինչպես է մի ազգ ոչնչացնում մյուս ազգի պատմությունը, մշակույթը, ավանդույթները»:

Թերթի մյուս էջերում արտատպումներ են, գլխավորապես **«Ազգ»** օրաթերթից, ինչպես նաեւ «Արմենֆո» գործակալությունից եւ «Պանարմենիան նյուս» էլեկտրոնային թերթից:

«Նոր սերունդ»-ի առաջին էջում տպագրվել են ՀՀ Աժ նախագահ Արմեն Խաչատրյանի եւ Թբիլիսիի հայերի միության ղեկավար Անոլդ Ստեփանյանի հարցազրույցները:

«Պավոտ, վերջին 150 տարիներին առաջին անգամ Թբիլիսիի սակրեբուլոյում (քաղխորհուրդ) չի ներկայացված մայրաքաղաքի հայ համայնքից եւ ոչ մի անդամ», ասում է Ստեփանյանը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

«Ես ադրբեջանցի եմ... եւ արդեն ինը տարի շարունակ ապրիլի 24-ին այցելում եմ Ծիծեռնակաբերդ»

«Նոր սերունդ»-ի համարշակ խոսքը

«Ես շփվել եմ շարքային հայերի եւ թուրքերի հետ, նրանք ձգտում են խաղաղության: Արդեն ինը տարի շարունակ ապրիլի 24-ին այցելում եմ Ծիծեռնակաբերդ, որտեղ զրուցում եմ ծերունիների հետ, ովքեր տարել են այդ ողբերգությունը, եւ իրենց կյանքի ահավոր օրերին, հույս ունեն վերադառնալ այնտեղ, որտեղ ապրել են իրենց նախնիները: Նրանք նաեւ ասում էին, որ եթե Թուրքիան ճանաչի Ցեղասպանության փաստը, ապա իրենց հոգիներն անհամեմատ կխաղաղվեն», ասում է Հուսեյնովը:

Թբիլիսիում լույս տեսնող վրաց-ադրբեջանական «Նոր մտածելակերպ» թերթի խմբագրի վերը հիշատակած մեջբերումները վերցրել ենք Թբիլիսիում լույս տեսնող մեկ այլ թերթից՝ «Նոր սերունդ»-ից, որի 5-րդ համարը լույս է տեսել մայիսին եւ գրեթե ամբողջությամբ նվիրված է Հայոց ցեղասպանությանը:

«Նոր սերունդ»-ի հրատարակիչը Վրաստանի հայկական երիտասարդական միությունն է, խմբագիրը՝ Թամարա Հովասափյանը: Ամսաթերթը լույս է տեսնում ռուսերենով: Թերթի երրորդ էջում «Հայկական հարց» խորագրի տակ, հիշատակվում են այն երկրները, խորհրդարանները եւ միջազգային կազմակերպությունները, որոնք ճանաչել են 1915 թ. Ցեղասպանությունը:

Ամերիկացիները Հուսեյնին փնտրում են ռմբակոծված շենքում

CNN հեռուստաընկերությունը երեկ հաղորդեց, որ ամերիկացի զինվորները որոնումներ են սկսել Բաղդադի Ալ Մանսուր շրջանում ավիառումբից ավերված ռեստորանի փլատակներում:

Հեռուստաընկերության տվյալներով, Իրաքի պատերազմի ժամանակ ռեստորանն օդուժի հարվածից ավերվել է այն պահին, երբ ամերիկյան հետախուզության տվյալներով, թերեւս այնտեղ են եղել Սադդամ Հուսեյնը եւ իր մերձավորները:

CNN-ին տված հարցազրույցում զինվորականները հույս են հայտնել, թե որոնումները թույլ կտան նոր տեղեկություններ ստանալ Հուսեյնի մասին:

Ավելի վաղ՝ ապրիլի կեսերին, իրաքցի հայտնի լրագրող Ամր Նաֆահը «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության եթերում հայտարարել էր, թե ապրիլի լույս 8-ի գիշերը Սադդամ Հուսեյնը զոհվել է ռմբակոծությունից:

Նույն օրերին Լոնդոնի արաբալեզու «Ալ Ղուդս ալ Արաբի» թերթը հրապարակել էր ականատեսների վկայություններ, որոնք հաստատում էին Հուսեյնի եւ նրա մերձավորների զոհվելը: Թերթի տվյալներով, Սադդամ Հուսեյնը եւ քաղաքացիական ու զինվորական 15 բարձրաստիճան ղեկավարներ մտել են «Աս Սաա» ռեստորանի կողքի շենքը, իսկ 40 րոպե անց շենքը ռմբակոծվել է: Ռմբակոծությունից հիմնովին ավերվել էին ռեստորանը եւ մերձակա 3 շենքերը: Պայթյունների հետեւանքով գոյացել էր 18 մետր տրամագծով ծագարային փոս:

Պակիստանի հյուսիս-արեւմուտքում շարիաթի իշխանություն է հաստատվել

Պակիստանի հյուսիսարեւմտյան սահմանամերձ նահանգի տեղական ժողովի անդամները միաձայն օրենք են ընդունել նահանգում շարիաթի կանոններին համապատասխան կառավարում մտցնելու մասին: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ պատգամավորներից ոչ մեկը չի համարձակվել դեմ քվեարկել օրինագծին, քանի որ դա կնշանակի բուն իսլամի ննդաստություն, որը Պակիստանի սահմանադրության հիմքն է:

Ընդունված օրենքի համաձայն, իսլամական օրենքներն ու նորմերը գերիշխելու են նահանգի դատարաններում բոլոր գործերի քննության ժամանակ: Կվերանայվեն նաեւ կրթության համակարգը եւ տնտեսական հիմնադրույթները, որպեսզի համապատասխանեցվեն «Ղուրանի եւ Սուննայի ոգուն ու տառին»: Այդ նպատակով ստեղծվում է 3 հանձնաժողով, որոնք մեկ ամսում պետք է ներկայացնեն իրենց առաջարկությունները ու հանձնարարականները:

Բացառված չէ, որ մոտ ժամանակներս համանման օրենք ընդունվի նաեւ Աֆղանստանին սահմանակից Բելուջստանի նահանգում, որտեղ կրոնավորներ կան կառավարությունում եւ խորհրդարանում:

Քաղաքական դիտորդները նշում են, որ Պակիստանի հյուսիսային շրջանների իսլամացումը կարող է աշխուժացնել արմատական զինյալ խմբավորումների գործունեությունը:

ԻՐԱՔ

Բաղդադում ձերբակալված շեյխն ազատ է արձակվել գույցերից հետո

Ամերիկյան զորքերը երեկ ազատ են արձակել Իրաքի Նեջեֆ քաղաքի շիա մահմեդականների հոգեւոր դպրոցի շրջանային բաժանմունքներից մեկի առաջնորդ, շեյխ Ջասիմ ալ Սաադիին: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ նախօրեին նա ձերբակալվել էր Բաղդադում: Նրա ձերբակալման լուրն արագորեն տարածվել էր քաղաքում: Նեջեֆի հոգեւոր դպրոցի հազարավոր կողմնակիցներ անմիջապես ցույց էին արել Բաղդադի Մանսուր շրջանում: Ցուցարարները պահանջել էին ազատ արձակել շեյխին եւ առաջիկայում այլեւս չձերբակալել իրաքցի կրոնական գործիչներին: Նաեւ կոչ էր արվել միավորել Իրաքի շիա եւ սուննի մահմեդականներին եւ համատեղ պայքարել երկրի օկուպացման դեմ:

Նեջեֆի դպրոցն իրաքցի շիա մահմեդականների բարձրագույն հոգեւոր ատյանն է:

Պ. Ք.

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Բրիտանական ավիաուղիները» Հայաստանում ունի նոր տնօրեն

«Բրիտանական ավիաուղիներն» այժմ Հայաստանում ունի նոր տնօրեն՝ Սիմոն Ավագյանը: Օրերս նա նշանակվեց այդ պաշտոնում եւ այսուհետեւ կղեկավարի ընկերության առեւտրային գործառնությունները մեր երկրում: Նոր տնօրենն իր հետ բերում է հարուստ փորձառություն: Նախապես նա եղել է «Դեյսի էյրլայնսի» մենեջերը Հայաստանում, այնուհետեւ՝ «Սուիս էյր» ավիաընկերության Հայաստանի գրասենյակի գլխավոր մենեջերի տեղակալ, իսկ ավելի ուշ՝ «Հայկական ավիաուղիների» գլխավոր փորձագետը: Պրն Ավագյանը բիզնեսի ղեկավարում եւ համակարգչային գիտություն մասնագիտությամբ Երեւանի պետական ճարտարագիտական համալսարանի շրջանավարտ է:

Նորանշանակ տնօրենը պատասխանատու է Հայաստանում «Բրիտանական ավիաուղիների» առեւտրային գործունեության, որ 1997 թ.-ից սկսյալ կայուն կերպով բարգավաճում է՝ ներկայումս իրականացնելով շաբաթական արդեն 3 ուղղակի թռիչք Երեւանից Լոնդոն եւ հակառակը:

Նոր պաշտոնում նշանակման կապակցությամբ Սիմոն Ավագյանը նշեց. «Ուրախ եմ այս պաշտոնը ստանձնելու առթիվ, ուրախ եմ աշխատելու շատ փորձառու եւ կարող մի թիմի հետ, պահպանելու սպասարկման այն բարձրագույն մակարդակը, որ բնորոշ է «Բրիտանական ավիաուղիներին» եւ «Բրիտանական միջերկրականյան ավիաուղիներին»:

Երեւան-Լոնդոն-Երեւան չվերթերն իրականացվում են «էյրբաս» A 320-200 ինքնաթիռներով: Թռիչքների իրականացնողն է «Բրիտանական միջերկրականյան ավիաուղիները», որ ֆրանչայզ գործընկերն է «Բրիտանական ավիաուղիների»:

«ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐԻ» ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Մեծ Բրիտանիայի խորհրդարանը կստուգի վարչապետի զեկուցագրի ճշտությունը

Մեծ Բրիտանիայի խորհրդարանը հայտարարել է, որ մտադիր է Իրաքի պատերազմին երկրի մասնակցության վերաբերյալ կառավարության ընդունած որոշման քննություն անցկացնել: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ առանձնակի ուշադրություն է դարձվելու խորհրդարանին վարչապետ Թոնի Բլերի ներկայացրած այն զեկուցագրին, թե Իրաքում զանգվածային բնաջնջման զենք կա:

Տվյալ զեկուցագիրը հիմք ընդունելով խորհրդարանը հավանություն էր տվել Իրաքի պատերազմին Մեծ Բրիտանիայի մասնակցությանը:

Մայիսի վերջերին տեղեկություններ ի հայտ եկան, թե վարչապետի զեկուցագրում օգտագործված հետախուզական որոշ տվյալներ դիտավորյալ խեղաթյուրվել են կառավարության կողմից:

Բրիտանական հետախուզության բարձրաստիճան սպաներից մեկի խոսքերով, կառավարությունն է հնարել մասնավորապես զեկուցագրի այն կետը, թե Սադդամ Հուսեյնը իր «ի վիճակի է 45 րոպեում գործի դնել իր քիմիական ու մանրէական զենքերը»: Նախնական տարբերակում նման կետ չի եղել:

Նույն սպան պնդում է, որ զեկուցագրում բերված տվյալների մեծ մասը հաստատվել է երկու կամ ավելի աղբյուրների կողմից, մինչդեռ 45 րոպեին առնչվող պնդումն ստացվել է միայն մեկ աղբյուրից, որի տեղեկությունների հավաստիության առնչությամբ բրիտանացի հետախույզները որոշակի կասկածներ ունեն: Իրականությանը չհամապատասխանող այդ տեղեկատվությունը չէր մտել բրիտանական հետախուզության ներկայացրած փաստաթղթի մեջ:

Մեծ Բրիտանիայի կառավարությունը ժխտում է, թե զեկուցագրում ներառվել են չստուգված տեղեկություններ կամ փաստաթուղթը վերամշակվել է: Խորհրդարանի միջազգային գործերի հանձնախումբը, որին հանձնարարված է քննության անցկացումը, հունիսին լսելու է հարցին առնչվող վկաների ցուցմունքները եւ նույն ամսին հրապարակելու է հաշվետվություն:

Կառավարությունը պնդում էր, որ Իրաքի պատերազմին մասնակցելու վերաբերյալ որոշման ընդունման հանգամանքները քննի խորհրդարանի հետախուզության եւ ազգային անվտանգության հանձնախումբը: Սակայն խորհրդարանականներից շատերը դեմ արտահայտվեցին, նշելով, որ տվյալ հանձնախումբը հաշվետու է ոչ թե խորհրդարանին, այլ վարչապետին: Իսկ այդ պարագան թույլ կտա հանրությունից թաքցնել քննության արդյունքները:

Փաուելն Արաֆաթին հորդորում է «չխանգարել հաշտությանը»

ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը դիմել է պաղեստինցի առաջնորդ Յասեր Արաֆաթին, պահանջելով չխոչընդոտել մերձավորարեւելյան հաշտության գործընթացին:

Շարմ էլ Շեյխում (եգիպտոս) անցկացված մամլո ասուլիսում Փաուելը խոստացել է, որ Արաֆաթն առաջվա պես ընտրյալ նախագահ է եւ պաղեստինցիների առաջնորդ, սակայն, ԱՄՆ ղեկավարության կարծիքով, «նրա վարչակազմի գործունեությունն ավարտվել է ձախողմամբ»:

VOA News էլեկտրոնային գործակալության տվյալներով, մամլո ասուլիսին ներկա է եղել Պաղեստինյան ինքնավարության վարչապետ Մահմուդ Աբբասը, որին Փաուելը խոստացել է ամենայն աջակցություն: Միեւնույն ժամանակ պետքարտուղարը Յասեր Արաֆաթին կոչ է արել ընդունել կատարվող փոփոխությունները եւ նպաստել Մերձավոր Արեւելքում խաղաղության հաստատմանը:

Փաուելը ելույթ է ունեցել Ամբայի (Հորդանան) հանդիպումից մի քանի ժամ առաջ, որին երեկ մասնակցեցին Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը, Պաղեստինյան ինքնավարության վարչապետ Մահմուդ Աբբասը եւ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը:

Պ. Ք.

Մշակույթ

Ինձ այնպես թվաց, թե այս զույգն անավարտ կտավ է, գույների շարունակություն, ու հասկացա, որ Ռոբերտ Էլիբեկյանի նկարներն այդպիսին են՝ շարունակելի, ինչպես կյանքն է, ժամանակը՝ միշտ չբավարարող, կիսաս: Երբ բոլորովին անծանոթ ես էլիբեկյանին, դժվար է իրեն միանգամից ընկալելը: Իմ այս զույգն առանց հարցուպատասխանի է, այսինքն՝ գրեթե առանց միջամտության, ինքն իր մտքերի հոսքի մեջ է՝ անակնկալ հայտնվող եւ այդպես էլ անհետացող, անավարտ: Իմ տպավորությունն է, որովհետեւ երբ փորձում ես ընդհատել նրան հարց տալու համար, զարմանալի անմիջականությամբ ասում է՝ «Չէ, չէ, սպասիր է, բան մի հարցրու»... ու շարունակում, թե կյանքը հենց մշակույթ է, որ արվեստն ու կյանքն իրարից անկախ են, թե ընդհատվեն, արվեստը կդադարի: Կյանքի գունային դրսեւորման էլիբեկյանական արտիստիկ ոճը, մի փոքր անփույթ վերաբերմունքն առաջացնում են յուրօրինակ ծգողականություն՝ հանդեպ իր անձը եւ արվեստը, որ գունային տաք անդրադարձումներով արեւելյան տեսիլքի նման շենքող է, լուսավոր, իմպուլսիվ, կենսականությամբ լի: Գունային այս տարածքում ապրող էակները, սիմվոլներն ու կանայք հաճախ պչրուհիների նման վող, ստեղծել են խորհրդավոր մի աշխարհ, գեղապաշտ իրականություն: Նկարիչը թատերականացված է դիտարկում աշխարհը, կյանքը՝ բեմական տարբեր դրսեւորումներով: Իրականի ու երեւակայականի միջեւ սահմանաբաժան չկա, միաձույլ են՝ առեղծվածային-հետաքրքրական: Թատերական ոճն իր արվեստին թեթեւություն է հաղորդում, զգացմունքային կողմը դարձնում ավելի բազմաբնագ, հյութեղ: Պատկերաստեղծման արտիստիկ կեցվածքը ստեղծում է յուրօրինակ կոլորիտ, ուր առկա է միջնադարյան միջավայր. գայթակղիչ, մեղեդային նուրբ, սահուն, պատկերային շարժում ստեղծող ռիթմերով, սակայն խաբուսիկ, երազային: Սրանցով են պայմանավորվում, թերեւս, իր արվեստի յուրատեսակ ծգողականությունը: Ինքը՝ գեղանկարիչն էլ այդպիսին է՝ անորսալի, մի փիչ յուրօրինակ, ուրբաթախոս է իրեն համարում, չի սիրում, երբ իր մասին են խոսում, ցուցահանդեսներին նշանակություն այնքան էլ չի տալիս, չնայած տասնյակ ցուցահանդեսների կազմակերպված Հայաստանում եւ արտերկրում: Որպես արտիստ իր գործունեությունը չի ընդհատվել 66-ին Հայաստանում կազմակերպված իր առաջին ցուցահանդեսից սկսած: Իսկ ցուցահանդեսները շատ են եղել՝ Վիլնյուս, Մոսկվա, Բեյրութ, Փարիզ, Նյու Յորք, Տորոնտո, Ղեսրոյթ, Լիոն, Մոնրեալ եւ այլն:

Մարդկանց հետ շփումներից չի խուսափում, բայց «ժամանակը մեղք է», ասում է: Իր պատկերացումներով, արվեստը համաժամանակյա երեւույթ է, չկա հին ու նոր մշակույթ. «Ամենը, ինչ արվել է, ինձ համար է արվել: Դարեր ի վեր աշխատել են, երկիր կառուցել: Բոլորի եւ իմ համար է: Ծովը, օվկիանոսը բա չտեսնե՞ս, չխենթանա՞ս: Միշտ պետք է հայտնության պես լինի աշխարհը, եւ փոքրիկ մի ծաղիկ կարող է շատ ավելի իմպուլսներ տալ»: Իր համար երեւակայություն իբրեւ այդպիսին չկա, մարդկության անցյալի ողջ փորձը դրա ապացույցն է, որովհետեւ երբեւէ մարդու մտքով անցած որեւէ բան իրականացել է, կամ կդառնա իրականություն: «Աբստրակցիան նույնպես շատերն ընդունում են իբրեւ երեւակայություն, որովհետեւ առարկայական չէ: Աբստրակցիան արտահայտվելու ամենաազատ ձեւն է, եթե տաղանդավոր է, համոզում է: Արշիլ Գորկու գործերը, երբ առաջին անգամ տեսա, աղբել էի, զգացվում է, որ ծնունդով հայ է, թեեւ ինքն ամերիկյան էքսպրեսիոնիզմի նախահայրերից է: Ազգայինը նախ եւ առաջ զգացողություն է»:

Անավարտ զույգ

Կյանքը, երազը, խաղը Ռոբերտ Էլիբեկյանի կտավներում

Նկարչի համար անհասկանալի է ստեղծագործության էության մեկնաբանությունն առհասարակ, արվեստի մեջ բոլոր ծայրահեղություններն իր համար ընդունելի են, եթե տաղանդավոր են: Երբ փորձում է բացատրել, կիսաս է մնում. «Եթե կարողանամ բացատրել, կվերջանա, սա ամենօրյա պրոցես է եւ ոչ միայն իմ համար, այլ առհասարակ, արվեստում ամեն ինչ շարունակական է, սկիզբ, վերջ չկա: Դարերի հայացքից, ժամանակի հարթության մեջ մարդկության ողջ ստեղծագործությունն ամբողջական մշակույթ է դարձել ու պիտի ընկալես որպես այդպիսին: Երբ Հոմերոս ես կարդում, Պեսրարկա կամ Չարենց (որ ինձ համար ամենամեծ բանաստեղծն է), մտածո՞ւմ ես, թե երբ են գրել»:

Այսպես, ժամանակների հետ խոսող եւ նրանց ունկնդիր արվեստագետ է Ռոբերտ Էլիբեկյանը, պայմանական անմիջականությամբ ասում է՝ «Չէ, չէ, սպասիր է, բան մի հարցրու»... ու շարունակում, թե կյանքը հենց մշակույթ է, որ արվեստն ու կյանքն իրարից անկախ են, թե ընդհատվեն, արվեստը կդադարի: Կյանքի գունային դրսեւորման էլիբեկյանական արտիստիկ ոճը, մի փոքր անփույթ վերաբերմունքն առաջացնում են յուրօրինակ ծգողականություն՝ հանդեպ իր անձը եւ արվեստը, որ գունային տաք անդրադարձումներով արեւելյան տեսիլքի նման շենքող է, լուսավոր, իմպուլսիվ, կենսականությամբ լի: Գունային այս տարածքում ապրող էակները, սիմվոլներն ու կանայք հաճախ պչրուհիների նման ստեղծել են խորհրդավոր մի աշխարհ, գեղապաշտ իրականություն: Նկարիչը թատերականացված է դիտարկում աշխարհը, կյանքը՝ բեմական տարբեր դրսեւորումներով: Իրականի ու երեւակայականի միջեւ սահմանաբաժան չկա, միաձույլ են՝ առեղծվածային-հետաքրքրական: Թատերական ոճն իր արվեստին թեթեւություն է հաղորդում, զգացմունքային կողմը դարձնում ավելի բազմաբնագ, հյութեղ: Պատկերաստեղծման արտիստիկ կեցվածքը ստեղծում է յուրօրինակ կոլորիտ, ուր առկա է միջնադարյան միջավայր. գայթակղիչ, մեղեդային նուրբ, սահուն, պատկերային շարժում ստեղծող ռիթմերով, սակայն խաբուսիկ, երազային: Սրանցով են պայմանավորվում, թերեւս, իր արվեստի յուրատեսակ ծգողականությունը: Ինքը՝ գեղանկարիչն էլ այդպիսին է՝ անորսալի, մի փիչ յուրօրինակ, ուրբաթախոս է իրեն համարում, չի սիրում, երբ իր մասին են խոսում, ցուցահանդեսներին նշանակություն այնքան էլ չի տալիս, չնայած տասնյակ ցուցահանդեսների կազմակերպված Հայաստանում եւ արտերկրում: Որպես արտիստ իր գործունեությունը չի ընդհատվել 66-ին Հայաստանում կազմակերպված իր առաջին ցուցահանդեսից սկսած: Իսկ ցուցահանդեսները շատ են եղել՝ Վիլնյուս, Մոսկվա, Բեյրութ, Փարիզ, Նյու Յորք, Տորոնտո, Ղեսրոյթ, Լիոն, Մոնրեալ եւ այլն:

Մարդկանց հետ շփումներից չի խուսափում, բայց «ժամանակը մեղք է», ասում է: Իր պատկերացումներով, արվեստը համաժամանակյա երեւույթ է, չկա հին ու նոր մշակույթ. «Ամենը, ինչ արվել է, ինձ համար է արվել: Դարեր ի վեր աշխատել են, երկիր կառուցել: Բոլորի եւ իմ համար է: Ծովը, օվկիանոսը բա չտեսնե՞ս, չխենթանա՞ս: Միշտ պետք է հայտնության պես լինի աշխարհը, եւ փոքրիկ մի ծաղիկ կարող է շատ ավելի իմպուլսներ տալ»: Իր համար երեւակայություն իբրեւ այդպիսին չկա, մարդկության անցյալի ողջ փորձը դրա ապացույցն է, որովհետեւ երբեւէ մարդու մտքով անցած որեւէ բան իրականացել է, կամ կդառնա իրականություն: «Աբստրակցիան նույնպես շատերն ընդունում են իբրեւ երեւակայություն, որովհետեւ առարկայական չէ: Աբստրակցիան արտահայտվելու ամենաազատ ձեւն է, եթե տաղանդավոր է, համոզում է: Արշիլ Գորկու գործերը, երբ առաջին անգամ տեսա, աղբել էի, զգացվում է, որ ծնունդով հայ է, թեեւ ինքն ամերիկյան էքսպրեսիոնիզմի նախահայրերից է: Ազգայինը նախ եւ առաջ զգացողություն է»:

Նկարչի համար անհասկանալի է ստեղծագործության էության մեկնաբանությունն առհասարակ, արվեստի մեջ բոլոր ծայրահեղություններն իր համար ընդունելի են, եթե տաղանդավոր են: Երբ փորձում է բացատրել, կիսաս է մնում. «Եթե կարողանամ բացատրել, կվերջանա, սա ամենօրյա պրոցես է եւ ոչ միայն իմ համար, այլ առհասարակ, արվեստում ամեն ինչ շարունակական է, սկիզբ, վերջ չկա: Դարերի հայացքից, ժամանակի հարթության մեջ մարդկության ողջ ստեղծագործությունն ամբողջական մշակույթ է դարձել ու պիտի ընկալես որպես այդպիսին: Երբ Հոմերոս ես կարդում, Պեսրարկա կամ Չարենց (որ ինքն համար ամենամեծ բանաստեղծն է), մտածո՞ւմ ես, թե երբ են գրել»:

Այսպես, ժամանակների հետ խոսող եւ նրանց ունկնդիր արվեստագետ է Ռոբերտ Էլիբեկյանը, պայմանական անմիջականությամբ ասում է՝ «Չէ, չէ, սպասիր է, բան մի հարցրու»... ու շարունակում, թե կյանքը հենց մշակույթ է, որ արվեստն ու կյանքն իրարից անկախ են, թե ընդհատվեն, արվեստը կդադարի: Կյանքի գունային դրսեւորման էլիբեկյանական արտիստիկ ոճը, մի փոքր անփույթ վերաբերմունքն առաջացնում են յուրօրինակ ծգողականություն՝ հանդեպ իր անձը եւ արվեստը, որ գունային տաք անդրադարձումներով արեւելյան տեսիլքի նման շենքող է, լուսավոր, իմպուլսիվ, կենսականությամբ լի: Գունային այս տարածքում ապրող էակները, սիմվոլներն ու կանայք հաճախ պչրուհիների նման ստեղծել են խորհրդավոր մի աշխարհ, գեղապաշտ իրականություն: Նկարիչը թատերականացված է դիտարկում աշխարհը, կյանքը՝ բեմական տարբեր դրսեւորումներով: Իրականի ու երեւակայականի միջեւ սահմանաբաժան չկա, միաձույլ են՝ առեղծվածային-հետաքրքրական: Թատերական ոճն իր արվեստին թեթեւություն է հաղորդում, զգացմունքային կողմը դարձնում ավելի բազմաբնագ, հյութեղ: Պատկերաստեղծման արտիստիկ կեցվածքը ստեղծում է յուրօրինակ կոլորիտ, ուր առկա է միջնադարյան միջավայր. գայթակղիչ, մեղեդային նուրբ, սահուն, պատկերային շարժում ստեղծող ռիթմերով, սակայն խաբուսիկ, երազային: Սրանցով են պայմանավորվում, թերեւս, իր արվեստի յուրատեսակ ծգողականությունը: Ինքը՝ գեղանկարիչն էլ այդպիսին է՝ անորսալի, մի փիչ յուրօրինակ, ուրբաթախոս է իրեն համարում, չի սիրում, երբ իր մասին են խոսում, ցուցահանդեսներին նշանակություն այնքան էլ չի տալիս, չնայած տասնյակ ցուցահանդեսների կազմակերպված Հայաստանում եւ արտերկրում: Որպես արտիստ իր գործունեությունը չի ընդհատվել 66-ին Հայաստանում կազմակերպված իր առաջին ցուցահանդեսից սկսած: Իսկ ցուցահանդեսները շատ են եղել՝ Վիլնյուս, Մոսկվա, Բեյրութ, Փարիզ, Նյու Յորք, Տորոնտո, Ղեսրոյթ, Լիոն, Մոնրեալ եւ այլն:

Մարդկանց հետ շփումներից չի խուսափում, բայց «ժամանակը մեղք է», ասում է: Իր պատկերացումներով, արվեստը համաժամանակյա երեւույթ է, չկա հին ու նոր մշակույթ. «Ամենը, ինչ արվել է, ինձ համար է արվել: Դարեր ի վեր աշխատել են, երկիր կառուցել: Բոլորի եւ իմ համար է: Ծովը, օվկիանոսը բա չտեսնե՞ս, չխենթանա՞ս: Միշտ պետք է հայտնության պես լինի աշխարհը, եւ փոքրիկ մի ծաղիկ կարող է շատ ավելի իմպուլսներ տալ»: Իր համար երեւակայություն իբրեւ այդպիսին չկա, մարդկության անցյալի ողջ փորձը դրա ապացույցն է, որովհետեւ երբեւէ մարդու մտքով անցած որեւէ բան իրականացել է, կամ կդառնա իրականություն: «Աբստրակցիան նույնպես շատերն ընդունում են իբրեւ երեւակայություն, որովհետեւ առարկայական չէ: Աբստրակցիան արտահայտվելու ամենաազատ ձեւն է, եթե տաղանդավոր է, համոզում է: Արշիլ Գորկու գործերը, երբ առաջին անգամ տեսա, աղբել էի, զգացվում է, որ ծնունդով հայ է, թեեւ ինքն ամերիկյան էքսպրեսիոնիզմի նախահայրերից է: Ազգայինը նախ եւ առաջ զգացողություն է»:

Նկարչի համար անհասկանալի է ստեղծագործության էության մեկնաբանությունն առհասարակ, արվեստի մեջ բոլոր ծայրահեղություններն իր համար ընդունելի են, եթե տաղանդավոր են: Երբ փորձում է բացատրել, կիսաս է մնում. «Եթե կարողանամ բացատրել, կվերջանա, սա ամենօրյա պրոցես է եւ ոչ միայն իմ համար, այլ առհասարակ, արվեստում ամեն ինչ շարունակական է, սկիզբ, վերջ չկա: Դարերի հայացքից, ժամանակի հարթության մեջ մարդկության ողջ ստեղծագործությունն ամբողջական մշակույթ է դարձել ու պիտի ընկալես որպես այդպիսին: Երբ Հոմերոս ես կարդում, Պեսրարկա կամ Չարենց (որ ինքն համար ամենամեծ բանաստեղծն է), մտածո՞ւմ ես, թե երբ են գրել»:

Այսպես, ժամանակների հետ խոսող եւ նրանց ունկնդիր արվեստագետ է Ռոբերտ Էլիբեկյանը, պայմանական անմիջականությամբ ասում է՝ «Չէ, չէ, սպասիր է, բան մի հարցրու»... ու շարունակում, թե կյանքը հենց մշակույթ է, որ արվեստն ու կյանքն իրարից անկախ են, թե ընդհատվեն, արվեստը կդադարի: Կյանքի գունային դրսեւորման էլիբեկյանական արտիստիկ ոճը, մի փոքր անփույթ վերաբերմունքն առաջացնում են յուրօրինակ ծգողականություն՝ հանդեպ իր անձը եւ արվեստը, որ գունային տաք անդրադարձումներով արեւելյան տեսիլքի նման շենքող է, լուսավոր, իմպուլսիվ, կենսականությամբ լի: Գունային այս տարածքում ապրող էակները, սիմվոլներն ու կանայք հաճախ պչրուհիների նման ստեղծել են խորհրդավոր մի աշխարհ, գեղապաշտ իրականություն: Նկարիչը թատերականացված է դիտարկում աշխարհը, կյանքը՝ բեմական տարբեր դրսեւորումներով: Իրականի ու երեւակայականի միջեւ սահմանաբաժան չկա, միաձույլ են՝ առեղծվածային-հետաքրքրական: Թատերական ոճն իր արվեստին թեթեւություն է հաղորդում, զգացմունքային կողմը դարձնում ավելի բազմաբնագ, հյութեղ: Պատկերաստեղծման արտիստիկ կեցվածքը ստեղծում է յուրօրինակ կոլորիտ, ուր առկա է միջնադարյան միջավայր. գայթակղիչ, մեղեդային նուրբ, սահուն, պատկերային շարժում ստեղծող ռիթմերով, սակայն խաբուսիկ, երազային: Սրանցով են պայմանավորվում, թերեւս, իր արվեստի յուրատեսակ ծգողականությունը: Ինքը՝ գեղանկարիչն էլ այդպիսին է՝ անորսալի, մի փիչ յուրօրինակ, ուրբաթախոս է իրեն համարում, չի սիրում, երբ իր մասին են խոսում, ցուցահանդեսներին նշանակություն այնքան էլ չի տալիս, չնայած տասնյակ ցուցահանդեսների կազմակերպված Հայաստանում եւ արտերկրում: Որպես արտիստ իր գործունեությունը չի ընդհատվել 66-ին Հայաստանում կազմակերպված իր առաջին ցուցահանդեսից սկսած: Իսկ ցուցահանդեսները շատ են եղել՝ Վիլնյուս, Մոսկվա, Բեյրութ, Փարիզ, Նյու Յորք, Տորոնտո, Ղեսրոյթ, Լիոն, Մոնրեալ եւ այլն:

Մարդկանց հետ շփումներից չի

ՄԵԼՈՒՏՅԱՆ ԲԱԴԱԼՅԱՆ

Միջազգային պարգեւը՝ Հայաստանի մշակույթի փոխնախարարին

Հայաստանի մշակույթի, երիտասարդության հարցերի ու սպորտի փոխնախարար Կարեն Արիստակեսյանն արժանացել է «Պատիվ. Փառ. Աշխատանք» Գեորգիեւյան մեդալի, որը շնորհում է «Ոսկե ճակատագիր» ժողովրդայնության ու որակի միջազգային ակադեմիական վարկանիշ հաստատությունը: Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում գտնվող այդ կազմակերպությունը հիմնադրել են Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Մոլդովայի, Վրաստանի, Լատվիայի, Ալբանիայի, Կորեայի, Պակիստանի եւ մի շարք այլ՝ թվով 24 երկրների գիտությունների ակադեմիաները:

Միաժամանակ ՀՀ փոխնախարարը հրավիրվել է վարկանիշի հաստատության միջազգային գեղարվեստական խորհրդի կազմ: «Վստահ եմ, որ «Ոսկե ճակատագրի» շրջանակներում մեր համատեղ աշխատանքը հեռանկարային խոշոր

ՀՀ հավաքականները պատրաստվում են ընտրական մրցախաղին

Ֆուտբոլի Հայաստանի ազգային եւ երիտասարդական հավաքականների ֆուտբոլիստները Միխայ Ստոյկիցայի ու Անդրանիկ Ադամյանի գլխավորությամբ հունիսի 1-ից սկսել են ուսումնամարզական հավաքը՝ նախապատրաստվելով Ուկրաինայի հավաքականների հետ առաջիկա ընտրական մրցախաղերին: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ազգային հավաքականների հանդիպումը կայանալու է Լվովի «Ուկրաինա» մարզադաշտում հունիսի 7-ին: Խաղը սկսվելու է երեւանի ժամանակով ժամը 21-ին եւ ցուցադրվելու է հանրային եւ «Արմենիա» հեռուստաընկերությունների ուղիղ եթերում: Նախորդ օրը Լվովից 80 կմ հեռու գտնվող Չերվոնոգրադ քաղաքի «Շախտյոր» մարզադաշտում ուժերը կչափեն երկու երկրների երիտասարդական հավաքականները:

Ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Միխայ Ստոյկիցան հավաքի է հրավիրել 23 ֆուտբոլիստի: Սակայն «Միկայի» ավագ Արմեն Պետիկյանը հրաժարվել է հավաքականում հանդես գալուց՝ պատճառաբանելով, որ ամեն անգամ հրավիրվում է ազգային թիմ, սակայն երբեք չի ընդգրկվում կազմում: Եվ այսպես, բացի Պետիկյանից, առաջիկա հանդիպումներին նախապատրաստվում են հետեւյալ ֆուտբոլիստները.

Դարպասպահներ՝

Ռոման Բերեզովսկի («Դինամո» Մոսկվա), Արմեն Համբարձումյան («Մարեկ» Բուլղարիա), Աղուլա Բետ («Ֆյունիկ»):

Պաշտպաններ՝

Սարգիս Հովսեփյան («Զենիթ»), Կարեն Դոխոյան («Կոռիլյա սովետով»), Հարություն Վարդանյան («Յանգ բոյզ» Շվեյցարիա), Խոսե Բիլիբիո, Արթուր Մկրտչյան (երկուսն էլ՝ «Ֆյունիկ»), Արկադի Դոխոյան («Միկա»):

Կիսապաշտպաններ՝

Ռոմիկ Խաչատրյան («Օլիմպիակոս» Կիպրոս), Արթուր Պետրոսյան («Յանգ բոյզ» Շվեյցարիա), Կառլ Լոմբե, Էդուարդ Պարցիկյան (երկուսն էլ՝ «Ֆյունիկ»), Ալբերտ Սարգսյան («Արսենալ» Կիեւ), Արթուր Ոսկանյան («Դիգենիս» Կիպրոս), Սերգեյ Առաքելյան, Ռոմեո Զենեբյան («Բանանց»), Նիկոլայ Սարգսյան («Ֆյունիկ»):

Պաշտպաններ՝

Վարդան Հովհաննիսյան («Միկա»), Արտավազդ Մկրտչյան («Վաղարշապատ»), Վահան Մառանջյան («Շիրակ»), Վալերի Ալեքսանյան («Ֆյունիկ»), Բարսեղ Կիրակոսյան («Ավտոդոր» Վլադիկավկազ), Արմեն Տատինցյան («Լեռնագործ»):

Կիսապաշտպաններ՝

Աղվան Մկրտչյան, Լեւոն Փալաքյան, Միսիքար Գրիգորյան (բոլորն էլ՝ «Ֆյունիկ»), Արարատ Առաքելյան, Սամվել Մելքոնյան («Բանանց»), Դավիթ Գրիգորյան («Միկա»), Արթուր Պետրոսյան («Դինամո»), Արսեն Մելոյան («Կոտայք»), Արսեն Սարգսյան («Արարատ»):

Հարձակվողներ՝

Գալուստ Պետրոսյան («Արարատ»), Վահե Դավթյան («Բանանց»), Էդգար Մանուչարյան («Ֆյունիկ»), Արկադի Հակոբյան («Զեռնոմորեց» Ռուսաստան), Գոռ Միրզախանյան, Վահե Թադեւոսյան (երկուսն էլ՝ «Կոտայք»):

Արարատ Հարությունյան («Շիրակ»):

Հարձակվողներ՝

Արման եւ Արտավազդ Քարամյաններ («Պանահաիկի» Հունաստան), Եղիա Յավրույան («Մատավ» Հունգարիա), Արա Հակոբյան («Բանանց»):

Բացառված չէ, որ նշված ցանկից Զենեբյանը, Առաքելյանը, Լոմբեն ու Բետեն հանդես գան երիտասարդական հավաքականում:

Երիտասարդականի գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանը հավաքի է հրավիրել հետեւյալ ֆուտբոլիստներին.

Դարպասպահ՝

Սարգիս Սարգսյանը հարազատ օջախում նշեց ծննդյան 30-ամյակը

Կարճ ժամանակով Երեւանում էր Հայաստանի թենիսիստների առաջատար Սարգիս Սարգսյանը, որը հայրենի օջախ էր վերադարձել հարազատների հետ նշելու ծննդյան 30-ամյակը: Օգտվելով առիթից, Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիան թենիսի մասնագիտացված մարզադպրոցում հանդիպում էր կազմակերպել անվանի թենիսիստի հետ: Սարգսի ճակատագրում երջադարձային եղավ 1993 թ. հունվարը, երբ ՀՀ հավաքականի կազմում մեկնեց ԱՄՆ՝ մասնակցելու տեղի համալսարանական թիմերի հետ ընկերական մրցախաղերին: Ստացվեց այնպես, որ նա էլ իր թիմակիցների հետ մնաց ԱՄՆ-ում, սովորեց համալսարանում եւ աստիճանաբար մասնակցելով մրցումների, դարձավ պրոֆեսիոնալ թենիսիստ:

Սարգիսը գտնում է, որ թենիսում մեծ հաջողությունների հասնելու համար երեք առաջնաստիճան, ամենօրյա մարզումներ են անհրաժեշտ, նաեւ պահանջվում է վճռականություն, սեփական ուժերի ճիշտ գնահատում: Սարգսին շատ է դուր գալիս Անդրե Աղասու խաղաոճը, նա թենիսում իր կուռքն է: Աղասու հետ Սարգիսն առաջին անգամ ծանոթացել է 6 տարի առաջ, միասին երկու շաբաթ համատեղ մարզվել են, հետագայում 3 անգամ նրա հետ հանդես է եկել զուգախաղում: Սարգսի կարծիքով, ամենահիշարժան հաղթանակներն ինքը տոնել է Մեդվեդեւի, Կաֆելնիկովի եւ Ֆիլիպուսիի նկատմամբ, իսկ ամենամեծ հաջողությանը հասել է Նյուփորթում՝ շահելով մրցաշարը: Մրցումներում Սարգիսը հանդես է գալիս «Նայք» ֆիրմայի մարզահագուստով, թեեւ գովազդային պայմանագիր չունի կնքած: Ընդհանրապես, պրոֆեսիոնալ թենիսում միայն շատ բարձր վարկանիշ ունեցող թենիսիստներին է հաջողվում գովազդային շահավետ պայմանագրեր կնքել: Չնայած Սարգիսը բնակվում է ԱՄՆ-ում, սակայն ազատ ժամանակն անց է կացնում Ավստրիայում: Մարզիչն էլ՝ Գյունտեր Բրեսլիկն ավստրիացի է, որը Սարգսին մարզում է շուրջ 2 տարի:

Մինչեւ ուիմբլդոնյան մրցաշարը, Սարգսյանը մասնակցելու է Գերմանիայում եւ Անգլիայում կայանալիք երկու մրցաշարի: Ազատ ժամանակ սիրում է գոլֆ խաղալ, ճամփորդել: Ինչ վերաբերում է անձնական կյանքին, ապա Սարգիսը խոստովանեց, որ առայժմ ընկերուհի չունի եւ մոտակա 2-3 տարիներին ամուսնանալու մասին խոսք լինել չի կարող: Իսկ մեծ թենիսում հույս ունի դեռեւս 4-5 տարի էլ հանդես գալ: Սարգիսն այսուհետ էլ ներկայացնելու է Հայաստանը, թեեւ հաջորդ տարի արդեն կարող է ամերիկյան անձնագիր ստանալ: Ինչ վերաբերում է Հայաստան վերադառնալուն, ապա Սարգիսը դժվարացավ այդ հարցին պատասխանել: Ժամանակը ցույց կտա:

Հայ ծանրորդուհու հաջող նորամուտը

Մեքսիկական Հերմոսիլո քաղաքում ընթացող ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում Հայաստանը ներկայացնող գեղեցիկ սեռի միակ ներկայացուցիչը՝ Հռիփսիմե Խուրշուդյանը, նորամուտը նշանավորեց հաջող ելույթով: Մինչեւ 63 կգ քաշային ների մրցավեճում Հռիփսիմեն 19 մասնակիցների մեջ գրավեց 7-րդ տեղը՝ երկամարտում ցույց տալով 192,5 կգ (87,5+105) արդյունք: Պոկում վարժությունում նրա երեք փորձերն էլ հաջողությամբ պսակվեցին, իսկ հրումում անհաջող էր միայն մեկ փորձն: Երկու վարժություններում էլ Հռիփսիմեն 8-րդն էր: Իսկ աշխարհի փորձը

«Քար եւ սիլիկաներ» ԳԱՆ ՓԲԸ-ն հայտարարում է 2003-2004 թթ. «Տնտեսություն, նրա ճյուղերի, տնտեսագիտություն եւ կառավարում» մասնագիտությամբ հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 16 հունիսի 2003 թ.:

Հասցեն՝ Երեւան, Աճառյան 40 ա:
Հեռ. 61-45-40

Ա/ձ-ձիկլոսոր «Արմեն Քարամյան»-ը Երեւանի «Ադամանդ» ապրանքահումքային բորսայի հարթակում աճուրդային վաճառքի է ներկայացնում՝

Լուծարվող «Գույմ» ՊՓԲԸ-ի գույքը, այդ թվում

- Վարչական շենք, կաթսայատուն, արտադրամաս, պահեստներ, ծածկարան, արհեստանոց, պահակատներ (ընդ. մակ. 2628 մ. մ.)

Գույքի մեկնարկային գինը՝ 5.700.000 դրամ:

Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Մայակովսկի:

Աճուրդները՝ դասական եղանակով, ս. թ. հունիսի 20-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժամը 13.00, ք. Երեւան, Միհր Մկրտչյան 5 հասցեով:

Տեղեկությունների համար դիմել Ա/ձ-ձիկլոսոր «Արմեն Քարամյան»-ին:

Հեռ. (09) 416818 կամ 56-31-15, 56-48-83:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ 08.07.2003 թ. կազմակերպում է մրցույթ Կապան համայնքի հետեւյալ երթուղիների համար:

Թիվ 1՝ Դավիթ-Բեկ հրապարակ-Կավարս թաղամաս
Թիվ 6՝ Շահումյան հրապարակ-Բաղաբերդ թաղամաս (Սննդի կոմբինատ)
Թիվ 7՝ Գործարանային փողոց (Կաթի գործարան)-Բաղաբերդ թաղամաս (Սննդի կոմբինատ)
Թիվ 8՝ Չարենցի փողոց-Շինարարների թաղամաս
Թիվ 15՝ Գ. Նժդեհի հանգստի գոտի-Բաղաբերդ թաղամաս (Սննդի կոմբինատ)

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ 03.07.2003 թ. պետք է ներկայացնեն մրցույթի մասնակցության հայտ, ընկերության (անձը հաստատող) փաստաթղթեր, մրցույթի մասնակցության անդորրագիր:

Տեղեկությունների համար դիմել քաղաքապետարան, մրցութային հանձնաժողով:

«Կերամիկա» ՍՊ ընկերությունն աշխատանքի է հրավիրում բարձրագույն կրթությամբ, 30-50 տարեկան ջերմոտեխնիկ-նախագծողների: Աշխատանքային փորձը պարտադիր է: Հեռ. 61-04-51:

(529353 անվճար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Շտապ վաճառվում են օգտագործված ռումինական մահճակալ, հարավսլավական սոֆա, մեկդռնանի եւ երկդռնանի զգեստապահարաններ: Հեռ.՝ 26-01-80, 22-89-01:
- Տրվում է վարձով 1,5 սենյ. բնակարան փոխ/ր կենտրոնում 10/5: Հեռ.՝ 62-58-35:
- Կորել է Դավթյան Յանեկ Սամվելի «Մյուդ» իրավաբանական ինստիտուտի դիպլոմը:
- Գտնեմ իգի խաչ: Հեռ.՝ (09) 423833:
- Երեւանի հ. 23 ավագ դպրոցը (նախկին պրոֆտեխուսումնարանը) կատարում է ընդունելություն՝ ավտոնորոգողի, կահույքագործի, բժշկական, կենցաղային-էլեկտրական եւ էլեկտրոնային սարքավորումների սպասարկողի եւ վերանորոգողի մասնագիտությունների գծով: Շրջանավարտները ստանում են միջնակարգ կրթություն, համապատասխան որակավորում: Ցանկացողները՝ նաեւ «Բ-Ս» կարգի ավտովարորդի վկայական են ստանում: Հասցեն՝ Էրեբունի զանգված, Ավանեսովի 1: Հեռախոս՝ 47-17-31
- Վաճառվում է ամառանոց Արայի լեռան լանջին, Երեւանից 50 կմ հեռավորությամբ: Ամառանոցը երկհարկանի շինություն է, ավտոնկարով, 1000 քմ հողատարածքով, ունի 120 հատ ծառ: Գինը՝ 5000 դոլար: Հեռ.՝ 25-00-96, Հունան:
- Վաճառվում է 3 սենյականոց բնակարան ճամպայն գինիների գործարանի մոտ, 16-րդ հարկի 4-րդ հարկում, արեւկող, ընդ. մակերեսը՝ 80 քմ, բնակելին՝ 44 քմ, ունի երկու տնտեսական պատգամբ: Գինը՝ 11.500 ԱՄՆ դոլար: Հեռ.՝ 45-22-79:
- Վաճառվում է բջջային հեռախոս «Ալկատել-525», փոխվող պանելով, գինը՝ 190 դոլար: Հեռ.՝ 45-22-79:
- Շտապ վաճառվում է ռումինական հյուրասենյակի կահույք պատ՝ իր փափուկ կահույքով: Հեռ.՝ 65-68-37:
- Վաճառվում է 1985 թ. արտադրության «Մերսեդես-Բենց» 230Ե մակնիշի ավտոմեքենա: Գինը՝ $ 4000: Հեռ.՝ 48-21-19
- Շենական կազմակերպությունը հրավիրում է աշխատանքի վարպետ-դերձակների, խոհարարների, մատուցողների, ծեւավորողների: Հեռ.՝ 61-33-10: Հասցեն՝ Ա-վան, Աղի հանք, Աճառյան 42:
- Մոլորեցնում եմ դպրոցական նվագել՝ մատչելի գնով: Հեռ. 25-25-20:
- Վաճառվում է 207 քմ տարածք 16 թաղամասում: Հեռ.՝ 35-56-57, 36-38-48:
- Վաճառվում է 4 սենյականոց բնակարան Օրբելի փողոցում: Ունի 65.1 քմ բնակելի եւ 47.8 քմ օժանդակ տարածք, գտնվում է շենքի 2-րդ հարկում: Հեռ. 22-08-84:

ԲՀԻ օժանդակության հիմնադրամ հայաստանյան մասնաճյուղ

Կենտրոնական եվրոպական համալսարանը (ԿԵՀ)

Հայտարարում է մրցույթ բարձրագույն հաստատությունների դասախոսներին համար «Դասընթացների մշակման կենտրոն» ծրագրին մասնակցելու նպատակով:

Ծրագիրը նախատեսված է սոցիալական եւ հումանիտար գիտություններ դասավանդող մասնագետների համար: Դասընթացների աշխատանքային լեզուն անգլերենն է:

Դիմումների ընդունման եւ դասընթացների անցկացման ժամկետների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակ հետեւյալ հասցեով. Երեւան, Պուշկինի 1, բն. 2, հեռ.՝ 542119, 541719, 543901,

www.osi.am, e-mail: panalda@osi.am

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In English, Russian, Armenian and Turkish

Պատրաստվում եք ճամփորդությա՞ն Չմոռանաք վերցնել...

Անձնագիր

Ճամպրուկ

HSBC Բանկի Կրեդիտ քարտ

HSBC

Ձեր բանկն ամբողջ աշխարհում

Էչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ,2003

ՎՐԱՎԵՐ

Բազմահարկ շենքերի 2003-2004 թթ. ջեռուցման սեզոնի փորձնական ծրագրերին մասնակցության

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է Քաղաքային ջերմամատակարարման ծրագրի (Ծրագիր) նախապատրաստման համար վարկի կանխավճար, որի գումարների մի մասը նախատեսված է օգտագործել Երեւան, Գյումրի, Չարենցավան, Ջերմուկ, ինչպես նաեւ հանրապետության այլ քաղաքների բազմահարկ շենքերի ջեռուցման վերականգնման փորձնական ծրագրերի (ՓԾ) իրականացման նպատակով: ՓԾ-ին մասնակցելու համար ընտրվելու են բազմահարկ շենքեր (շենքերի խմբեր), որտեղ գոյություն ունեն կառավարման մարմիններ (ԿՄ)՝ համատիրություններ կամ բնակիչների լիազորած օրինական այլ մարմիններ (անձինք):

Նախատեսվում է իրականացնել ՓԾ-եր հետեւյալ հինգ ուղղություններով.

1. Գործող խմբային մեկ կաթսայատնից (որը սպասարկելու է մի քանի շենքերի) ջերմային էներգիան բազմահարկ շենքերի ԿՄ-երի կամ մասնավոր կառույցի միջոցով, շենքերի մուտքերում տեղակայված հաշվիչների հիման վրա, ջերմային էներգիայի գնելու տարբերակը: Իրականացվելու է մեկ ծրագիր:
2. Չգործող խմբային մեկ կաթսայատունը կամ կենտրոնական ջերմային հանգույցը (ԿՋՀ) բազմահարկ շենքերի ԿՄ-երի կամ մասնավոր կառույցի միջոցով շահագործելու տարբերակը: Այս դեպքում խմբային չգործող կաթսայատունը կամ ԿՋՀ-ն անվճար օգտագործման է տրվում շենքի (շենքերի) ԿՄ-ին: Իրականացվելու է մեկ ծրագիր:
3. Բլոկային (մինչեւ երեք շենքեր սպասարկող) կաթսայատան կամ ԿՋՀ-ի վերակառուցում կամ նոր կաթսայատան կառուցում եւ շահագործում բազմահարկ շենքերի ԿՄ-երի կամ մասնավոր կառույցի միջոցով: Չգործող կաթսայատան առկայության դեպքում այն անվճար օգտագործման է տրվում շենքի (շենքերի) ԿՄ-ին: Իրականացվելու են երկու-երեք ծրագրեր:
4. Գազի բնակարանային վառարանների եւ (կամ) կաթսաների տեղակայման կազմակերպում բազմահարկ շենքերի ԿՄ-երի միջոցով՝ մեկական ծրագիր յուրաքանչյուրից:
5. Գազի բնակարանային վառարանների եւ (կամ) կաթսաների տեղակայման կազմակերպում բազմահարկ շենքերի առանձին բնակարանների սեփականատերերի համար՝ թվով տասը ծրագրեր (բնակարաններ):

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության «Ջերմամատակարարման եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ՇԻԳ) հրավիրում է բազմահարկ շենքերի ԿՄ-ներին, մասնավոր ընկերություններին եւ բազմահարկ շենքերի առանձին բնակարանների սեփականատերերին (Շահառուներ) մասնակցել ՓԾ-երի շենքերի ընտրության մրցույթին, որը կիրականացվի Ծրագրի կառավարման խորհրդի կողմից հաստատված գնահատման չափանիշների համաձայն: ՇԻԳ-ի փորձագետները (ջերմատեխնիկ-ինժեներ, շինարար-կոնստրուկտոր, տնտեսագետ, վարկային մասնագետ) պատրաստ են գործնական օգնություն ցուցաբերել ջեռուցման տարբերակների ընտրությանը, ծրագրերի նախնական արժեքների գնահատմանը եւ իրականացմանն առնչվող այլ հարցերում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել **Մասնակցության հայտ**, որի ձեւը կարելի է ստանալ ՇԻԳ-ի գրասենյակից: Մրցութային փաստաթղթերի փաթեթը (մասնակցության հայտ, ՓԾ-երի իրականացման հիմնադրույթները, գնահատման չափանիշները) կարելի է ստանալ եւ հայտը ներկայացնել մինչեւ սույն թվականի հունիսի 15-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել վերը նշված հեռախոսահամարներով:

Հեռ.՝ +374 (1) 545-148, 545-149 կամ +374 (9) 425-376
Ֆաքս՝ +374 (1) 545-147
էլ. փոստ՝ tsparm@intertel.am
«Ջերմամատակարարման եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, 503 աշխատասենյակ

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Միջազգային զարգացման ընկերակցությունից ստացել է վարկ՝ քաղաքային ջերմամատակարարման ծրագրի նախապատրաստման համար (Նամակ-համաձայնագիր հ. PPF Q353-0-AM), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բազմահարկ շենքերի ջեռուցման փորձնական ծրագրեր՝ ջերմատեխնիկական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության «Ջերմամատակարարման եւ բազմաբնակարան շենքերի կառավարման աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ ՇԻԳ) հայտարարում է մրցույթ տեղական խորհրդատուների ընտրության համար հետեւյալ մասնագիտությունների գծով.

- բազմահարկ շենքերի ջերմամատակարարման համակարգերի նախագծող,
- շինարար-կոնստրուկտոր:

Դիմորդները պետք է ունենան մասնագիտական աշխատանքի եւ ջեռուցման բնագավառում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման փորձ: Անգլերեն լեզվի իմացությունը եւ մասնակցությունը նմանատիպ միջազգային ծրագրերում գերադասելի է:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչեւ սույն թվականի հունիսի 9-ը, ժամը 17.00-ը ՇԻԳ-ի տնօրենի օգնականին ներկայացնել համառոտ ինքնակենսագրություն հայերեն եւ անգլերեն լեզուներով՝ նշելով տվյալներ կրթության, աշխատանքային սպասի, մասնագիտական սերտիֆիկատների, լիցենզիաների, որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցության մասին տվյալներ՝ միջազգային պրակտիկայում ընդունված ձեւով:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսներով.

Հեռ. 54-51-49, 54-51-47, 54-51-48
Ֆաքս. 54-51-47
էլ. փոստ tsparm@intertel.am
«Ջերմամատակարարման եւ բազմաբնակարան շենքերի կառավարման աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, 503 սենյակ

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 4. 6. 2003 Գինը՝ 100 դրամ